Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-376[1]-20.09.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ
ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տարածական տվյալների մշակման և կառավարման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է պետական տարածական տվյալների ֆոնդի տեղեկատվության տրամադրման և դրանց առնչվող ծառայություններից օգտվելու համար գանձվող վճարների չափերը և արտոնությունները :

2. Սույն օրենքի նպատակն է սահմանել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ սուբյեկտների իրավասությունները, միջազգային համագործակցության և վեճերի լուծման կարգը տարածական տվյալների բնագավառում, ինչպես նաև սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը:

Հոդված 2. Տարածական տվյալների ոլորտը կարգավորող օրենսդրությունը

1. Տարածական տվյալների կառավարման վերաբերյալ օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման

մասին» օրենքներից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

2. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում տարածական տվյալների հավաքածուի բաղադրիչ տարրերի մտավոր սեփականության կամ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պաշտոնատար անձանց՝ իրենց գործունեության ոլորտում դրանք տիրապետելու իրավունքի վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ***տարածական (երկրատարածական) տվյալ՝*** գեոդեզիական և քարտեզագրական գործունեության (աշխատանքների) արդյունքում ստեղծված տարածական օբյեկտի գտնվելու վայրի, տեսքի և այլ հատկությունների մասին տվյալ, որը սահմանված տարածա-ժամանակային, կոորդինատային համակարգում ունի որոշակի տեղադիրք և վեկտորային տվյալների հավաքածուներում ներկայացված են կետերով, գծերով, բազմանկյուններով կամ աշխարհագրական այլ բարդ պատկերներով:

2) ***ազգային տարածական տվյալ՝*** Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ տարածական տվյալներ (բազային և թեմատիկ), որոնք մասնավորեցման ենթակա չեն, ստեղծվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը.

3) ***տարածական տվյալների բանկ՝*** բազային կամ այլ տարածական և ատրիբուտային տվյալների համախումբ, որն անհրաժեշտ է տարածքների և օբյեկտների վիճակի, Երկրի հեռազննման համալիր տվյալների վրա հիմնված երևույթների և գործընթացների մշտադիտարկման, ինչպես նաև հանրապետական և տեղական մակարդակներում բնապահպանական, սոցիալական և տնտեսական

զարգացման ծրագրերի իրականացման, կառավարման, տեղեկատվական, իրավական և այլ խնդիրների լուծման համար.

4) ***տարածական տվյալների մշակում*** ՝ տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, հավաքագրման, կարգավորման, պահպանման, փոփոխման, թարմացման, արտապատկերման (վիզուալիզացման), օգտագործման, տրամադրման, տարածման և փոխանցման մեկ կամ մի շարք գործողությունների իրականացում.

5) ***տարածական տվյալների ծառայությունները***՝ տարածական տեղեկատվության տրամադրումը համացանցի միջոցով, միևնույն ժամանակ օգտագործողին տրամադրում է տարածական տվյալների հետ աշխատելու համար գործիքներ և որը կարող է գործել ինքնաշխատ, անկախ՝ արտադրանքի կամ փոխկապակցված ծառայության տրամադրման տեսքով:

6) ***տարածական տվյալներ ստեղծող***՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, պաշտոնատար անձինք, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձինք, ովքեր ստեղծում կամ թարմացնում են տարածական տվյալներն ու մետատվյալները.

7) ***տարածական տվյալների ստանդարտացում***՝ ծրագրային ապահովման և տվյալների ինտեգրման միջոցառումների համախումբ, որոնք ուղղված են տարածական տվյալների հավաստիության, ամբողջականության և համապատասխանության մակարդակի բարձրացմանը.

8) ***տարածական տվյալներ օգտագործող***՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պաշտոնատար անձ, ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ, որոնք տարբեր նպատակներով օգտագործում են տարածական տվյալները.

9) ***տարածական օբյեկտ***՝ բնական և արհեստական օբյեկտներ, որոնց գտնվելու վայրը Երկրի վրա կարող է սահմանվել տարածական-ժամանակային կոորդինատների համակարգում.

10) ***ոլորտային տարածական տվյալներ՝*** պետական, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տարածական տվյալներ՝ պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների վերաբերյալ.

11) ***տարածական տվյալների ենթակառուցվածք՝*** տեխնոլոգիաների, նպատակային ծրագրերի, ստանդարտների, մարդկային ռեսուրսների և դրանց առնչվող գործունեությունների համախումբ, որոնք անհրաժեշտ են տարածական տվյալների և մետատվյալների ձեռք բերման, մշակման, տարածման, օգտագործման, պահպանման և ծառայությունների մատակարարման համար.

12) ***ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք՝*** ազգային տարածական տվյալների ձեռքբերման, մշակման, պահպանման, տարածման, օգտագործման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների, քաղաքականության, նկարագրված և իրականացված նորմերի և կանոնների հավաքածուների, աշխարհագրական տեղեկատվական հարթակի, միջազգային և Հայաստանի Հանրապետությունում ընդունված ազգային ստանդարտների, մետատվյալների և դրանց մշակման ծառայությունների, չափանիշների, մարդկային ռեսուրսների և հարակից գործողությունների տվյալների հասանելիության, փոխանակման և օգտագործման համաձայնության, համակարգման և մշտադիտարկման մեխանիզմների ամբողջություն.

13) ***բազային տարածական տվյալներ՝*** համընդանուր հասանելի, գաղտնիություն չպարունակող (բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության համար հավաքագրված տվյալների), բաց հրապարակման համար նախատեսված, ժամանակի մեջ կայուն տարածական դիրքով առանձնացվող և այլ տարածական օբյեկտների համար կողմնորոշման հիմք հանդիսացող, առավել օգտագործվող տարածական օբյեկտների թվային տվյալներ.

14) ***թեմատիկ տարածական տվյալներ***՝ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից իրենց մասնագիտական գործունեության շրջանակներում ստեղծված տարածական տվյալներ (տնտեսական, գիտական, կրթական և այլ).

15) ***ազգային գեոպորտալ***՝ համացանցային, սարքածրագրային համալիր՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հիմնական տարր, որն ապահովում է տարածական տվյալների հասանելիությունը վերտեխնոլոգիաների միջոցով.

16) ***մետատվյալներ***՝ տարածական տվյալներ և ծառայություններ նկարագրող տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ցուցակագրումը, որոնումը, տվյալների ճիշտ գնահատումն ու օգտագործումը տարբեր նպատակների համար.

17) ***փոխգործելիություն***՝ համակարգերի ու տեխնոլոգիաների միջև տեղեկատվություն փոխանակելու ունակություններ և փոխանակման արդյունքում համատեղ շահերի պահպանման համար անհրաժեշտ համաձայնեցված գործողություններ.

18) **աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ)՝** սարքածրագրային տեղեկատվական համակարգ, որը նախատեսված է տարածական տվյալների հավաքագրման, պահպանման, մշակման, վերլուծության, քարտեզագրման, մոդելավորման, կառավարման և տարածման համար:

19) **ատրիբուտային (հատկանիշային) տվյալներ՝** տարածական տվյալների հետ փոխկապակցված տեղեկատվություն է, որոնք նկարագրում են վեկտորային օբյեկտների առանձնահատկությունները: Այլ կերպ ասած, աշխարհագրական տեղեկատվություն են, որոնք կապված են ԱՏՀ-ում կետային, գծային կամ տարածական մոդելների հետ:

ԳԼՈՒԽ 2

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4. Տարածական տվյալների ոլորտում կառավարման հիմնական սկզբունքները

1. Տարածական տվյալների ոլորտում կառավարման հիմնական սկզբունքներն են՝

1) տարածական տվյալների ճշգրտության և հուսալիության ապահովումը մշտադիտարկման, գիտատեխնիկական փորձաքննության և տարածական տվյալների, մետատվյալների հավաքագրման և վերահսկման միջոցով.

2) համացանցի միջոցով՝ անվճար և վճարովի հիմունքներով գաղտնիության տարրեր չպարունակող տարածական տվյալների և մետատվյալների բաց հասանելիությունը տարածական տվյալներ օգտագործողներին.

3) բազային և թեմատիկ տարածական տվյալներում պետական գաղտնիք հանդիսացող և օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկատվության բացակայությունը.

4) տարածական տվյալների, մետատվյալների ստեղծումն ու մշակումը, համացանցային ծառայությունների մատուցումը.

5) տարածական տվյալների և մետատվյալների ստեղծումն ու պահպանումը անհատի, հասարակության և պետության անվտանգությանն ուղղված սպառնալիքների և կեղծիքների կանխարգելման նպատակներով:

Հոդված 5. Տարածական տվյալների ոլորտում Կառավարության լիազորությունները

1. Տարածական տվյալների ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) տարածական տվյալների ոլորտում պետական և այլ ծրագրերի մշակումը, հաստատումը և իրականացումը.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց օգտագործման համար հասանելի տարածական տվյալների ցանկի սահմանումը.

3) լիազոր պետական մարմնին տարածական տվյալների տրամադրման կարգի սահմանումը.

4) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա, գործունեության արդյունքում Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքագրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների ստեղծման նպատակով օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման համար թույլտվության տրամադրման կամ մերժման հիմքերի և կարգի սահմանումը.

5) պետական տարածական տվյալների ֆոնդի ստեղծման, պահպանման, տեղեկատվության տրամադրման (հրապարակման) կարգի հաստատումը.

6) օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա պետություններին տարածական տվյալների տրամադրման թույլտվության կարգի և մերժման հիմքերի սահմանումը.

7) պետական և ծառայողական գաղտնիք բովանդակող տարածական տվյալների հավաքագրման, տրամադրման, տարածման, օգտագործման կարգի սահմանումը.

8) լիազոր պետական մարմնի հետ տեղեկատվության պարբերական թարմացման ծառայությունների պայմանագրի օրինակելի ձևը և դրա հիման վրա տեղեկատվության տրամադրման կարգի հաստատումը.

9) հաստատում է տեխնիկական կանոնակարգման ոլորտում նորմատիվ իրավական ակտեր և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր.

10) հաստատում է տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված Կառավարության լիազորությունները սպառիչ չեն և սույն օրենքով կարող են սահմանվել այլ լիազորություններ:

Հոդված 6. Տարածական տվյալների ոլորտում լիազոր պետական մարմնի լիազորությունները

1. Տարածական տվյալների ոլորտում լիազոր պետական կառավարման մարմինը Կադաստրի կոմիտեն է (այսուհետ՝ նաև լիազոր մարմին).

2. Լիազոր մարմինը.

1) մասնակցում է տարածական տվյալների ոլորտում միասնական պետական քաղաքականության ձևավորմանը և իրականացմանը.

2) լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով մշտադիտարկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, այլ կազմակերպությունների կողմից տարածական տվյալների ստեղծումը, մշակումը, օգտագործումը կամ տարածումը.

3) ստուգում է ազգային գեոպորտալ մուտքագրվող թեմատիկ և բազային տարածական տվյալների՝ նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերին համապատասխանությունը մուտքագրման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Անհամապատասխանության դեպքում մերժում է թեմատիկ և բազային տարածական տվյալների մուտքագրումը: 5 աշխատանքային օրվա ընթացքում թեմատիկ և բազային տարածական տվյալների մուտքագրումը չմերժելու դեպքում տվյալները համարվում են մուտքագրված ազգային գեոպորտալ:

4) իրականացնում է բազային տարածական տվյալների, մետատվյալների և դրանց առցանց ծառայությունների ստեղծում ու մշակում.

5) պատվիրում է տարածական տվյալների ոլորտում գիտահետազոտական, փորձարարական աշխատանքներ, իրականացնում կամ պատվիրում է տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների մշակումը և ներդրումը.

6) տարածական տվյալների ոլորտում իրականացնում է միջազգային համագործակցություն.

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազոր մարմնի լիազորությունները սպառիչ չեն և սույն օրենքով կարող են սահմանվել այլ լիազորություններ:

Հոդված 7. Տարածական տվյալների ոլորտում պետական կառավարման այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները

1. Տարածական տվյալների ոլորտում պետական կառավարման այլ մարմինները, տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք՝

1) իրականացնում են թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների, մետատվյալների և դրանց առցանց ծառայությունների ստեղծման և մշակման աշխատանքներ.

2) ապահովում են օրենքով պահպանվող գաղտնիք չպարունակող թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների հասանելիությունը.

3) ապահովում են թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների ստանդարտացումը «Ստանդարտացման մասին» օրենքով սահմանված կարգով և ստանդարտացման ուղեցույցների հիման վրա

4) օգտագործում են տարածական տվյալները և մետատվյալները իրենց լիազորություններն իրականացնելու համար.

5) ապահովում են թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների և մետատվյալների օրինականությունը, ճշգրտությունը, հուսալիությունն ու անվտանգությունը.

6) ապահովում են թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների և մետատվյալների տրամադրումը կամ հասանելիությունը լիազոր մարմնին.

7) ստեղծում և վարում են թեմատիկ տարածական տվյալների ենթակառուցվածքներ.

8) իրենց իրավասության սահմաններում իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, պետական սահմաններին վերաբերող տարածական տվյալների հավաքագրում և պահպանում:

2. Տարածական տվյալների ոլորտում պետական կառավարման այլ մարմինները, տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են իրականացնել սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Գ Լ ՈՒ Խ 3

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՄ

Հոդված 8. Տարածական տվյալների ոլորտում աշխատանքի տեսակները

1. Տարածական տվյալների ոլորտում աշխատանքները բաժանված են հետևյալ տեսակների.

1) տարածական տվյալների և մետատվյալների ստեղծում, հավաքագրում, համակարգում, պահպանում, թարմացում, արտապատկերում, օգտագործում, տրամադրում, տարածում.

2) օդատիեզերական լուսանկարահանման (հեռազննման) նյութերի մշակում և դրա արդյունքում տարածական տվյալների ստեղծում.

3) տարբեր նպատակների համար ԱՏՀ-երի և տարածական տվյալների ենթակառուցվածքների ստեղծում, գործարկում, օգտագործում, վարում.

4) տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների ստեղծում, որոնք օգտագործվում են տարածական տվյալների մշակման և տարածման համար.

5) գեոպորտալների և դրանց առանձին գործառույթների ստեղծում և պահպանում.

6) տարածական տվյալների և մետատվյալների, դրանց առցանց ծառայությունների որակի վերաբերյալ գիտատեխնիկական փորձաքննության իրականացում.

7) տարածական տվյալների բազաների, մետատվյալների շտեմարանների, առցանց ծառայությունների, ԱՏՀ-երի, գեոպորտալների, տարածական տվյալների ոլորտում այլ տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների ստեղծմանն ուղղված գիտահետազոտական, փորձարարական և գիտատեխնոլոգիական աշխատանքների իրականացում.

8) տեխնիկական կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակում.

9) այլ աշխատանքների իրականացում՝ ԱՏՀ-երի և տարածական տվյալների ենթակառուցվածքների գործունեությունն ու զարգացումն ապահովելու համար:

Հոդված 9. Տարածական տվյալների ստեղծում

1. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների սահմաններում բազային տարածական տվյալներին առնչվող տարրերի ստեղծման աշխատանքներ իրականացնելիս համապատասխան նախագծերը, տեխնիկական առաջադրանքները, ինչպես նաև տվյալ աշխատանքների արդյունքում ստեղծված տարածական տվյալները՝ մինչև դրանք ընդունելը պետք է կարծիք ստանալու համար ներկայացնեն լիազոր մարմնին, բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության համար բազային տարածական տվյալների ստեղծման աշխատանքների, որոնք լիազոր մարմնին կարող են տրամադրվել իրավասու մարմինների որոշմամբ:

2. Լիազոր մարմինը սույն հոդվածի 1-ին մասում նշված նախագծերը, տեխնիկական առաջադրանքները և տարածական տվյալները ստանալուց հետո 15 օրվա ընթացքում ուսումնասիրում և համաձայնեցման ներկայացրած մարմնին է տրամադրում սույն օրենքին, «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքին, դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերին և ստանդարտներին, ստանդարտացման ուղեցույցներին համապատասխանության վերաբերյալ դրական կամ բացասական կարծիք: 15 օրվա ընթացքում կարծիք չտրամադրելու դեպքում լիազոր մարմնի կարծիքը համարվում է դրական:

3. Բացասական կարծիքը պետք է լինի պատշաճ պատճառաբանված և պարունակի բացասական կարծիքի բոլոր հիմքերը՝ համապատասխան հղումներով:

4. Բացասական կարծիքի առկայության դեպքում բազային տարածական տվյալը չի կարող ներառվել ազգային գեոպորտալում:

5. Բացասական կարծիք տրամադրվելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասում նշված սուբյեկտները կարող են վերացնել կարծիքում նշված անհամապատասխանությունները և ներկայացնել լիազոր մարմին՝ համաձայնեցման, որի դեպքում կիրառվում են սույն հոդվածի 2-5-րդ մասերը:

6. Պետական կառավարման մարմինները՝ իրենց վերապահված գործառույթների իրականացման գործընթացում ստեղծված բազային տարածական տվյալներին առնչվող տարրերը պետք է կառավարության սահմանած կարգով տրամադրեն լիազոր մարմնին՝ բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության համար հավաքագրված սահմանափակ մատչելիությամբ տվյալների, որոնք լիազոր մարմնին կարող են տրամադրվել իրավասու մարմինների որոշմամբ:

7. Օտարերկրյա Ֆիզիկական և իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքագրման աշխատանքներն իրականացնում են կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա՝ բացառությամբ այն տվյալների, որոնք կարող են ձեռք բերվել տիեզերական արբանյակների միջոցով կամ դրանց գրասենյակային մշակման արդյունքում:

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և իրավաբանական անձինք «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքագրման աշխատանքներն իրականացնում են կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա՝ բացառությամբ այն տվյալների, որոնք կարող են ձեռք բերվել տիեզերական արբանյակների միջոցով կամ դրանց գրասենյակային մշակման արդյունքում:

9. Բացառությամբ գիտատեխնիկական և շինարարական աշխատանքների նախագծման նպատակով իրականացվող օդալուսանկարահանման աշխատանքների, Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների ստեղծման նպատակով օդալուսանկարահանման աշխատանքներն իրականացվում են կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա:

10. Հայաստանի Հանրապետությունում գաղտնիք չպարունակող տարածական տվյալների ստեղծումը, մշակումը և պահպանումը կատարվում է ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում:

11. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տարածական տվյալները ու մետատվյալները ստեղծվում կամ թարմացվում են տարածական տվյալների ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

12. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց ստեղծած կամ այդ սուբյեկտների կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում այլ անձանց կողմից մշակվող և պահպանվող տարածական տվյալները Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի անբաժանելի մաս են:

Հոդված 10. Տարածական տվյալների խմբերը

1. Հայաստանի Հանրապետությունում տարածական տվյալները դասակարգվում են երկու հիմնական խմբերի՝ բազային տարածական տվյալներ, թեմատիկ տարածական տվյալներ:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից ստեղծված բազային տարածական տվյալները համարվում են

պետական սեփականություն՝ անկախ դրանց ֆինանսավորման աղբյուրներից և մասնավորեցման ենթակա չեն:

3. Բազային տարածական տվյալների այն մասը, որը ենթակա է հրապարակման չպետք է պարունակի օրենքով պահպանվող գաղտնիք:

4. Բազային տարածական տվյալները օգտագործվում են տարբեր նպատակներով ստեղծվող, ազգային, ոլորտային և տեղական ԱՏՀ-երում, կադաստրների և ռեգիստրների թեմատիկ և ոլորտային տարածական տվյալներում:

5. Բազային տարածական տվյալները և դրանց համապատասխան ստեղծված տեղեկատվական բազան (հատկանիշային տվյալներ), պարտադիր են բոլոր տարածական տվյալներ ստեղծող, մշակող, տարածող, տնօրինող կազմակերպությունների համար:

6. Որպես պարտադիր տեղեկատվություն, բազային տարածական տվյալների բանկն ընդգրկում է տեղադիրքի բաց գեոկապակցված (գեոռեֆերենց) պատկերներ, որոնք հիմնված են տիեզերական կամ օդալուսանկարների տվյալների վրա, կանոնակարգված տարածաժամանակային կոորդինատային համակարգերի վերաբերյալ տվյալներ, որոնք դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) վարչական սահմաններ.
2) անշարժ գույք («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված կադաստրային քարտեզ).
3) գնահատում.
4) իրավունք (գույքային իրավունքի տեսակ).
5) հողամասի նպատակային և գործառնական նշանակություն (հողատեսք).
6) հասցե.
7) աշխարհագրական անվանումներ.
8) մակերևույթային ջրեր.
9) պլանաբարձունքային հիմք.
10) ռելիեֆ.

11) ճանապարհատրանսպորտային ցանց.

12) օդատիեզերական լուսանկարահանման տվյալներ:

7. Բազային տարածական տվյալների բանկի ստեղծումը լիազոր մարմնի կողմից իրականացվում է բազային տարածական տվյալների հավաքագրման, ընտրության և ինտեգրման միջոցով:

8. Բազային տարածական տվյալների մեջ ներառված տեղեկատվությունը փոփոխվում և անընդհատ բարելավվում է: Բազային տարածական տվյալների մեջ ներառված տեղեկատվության կազմը սահմանվում են տարածական տվյալների ստանդարտներով և ստանդարտացման ուղղեցույցներով:

9. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի թեմատիկ տարածական տվյալների խմբերը, դրանց ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանվում են տարածական տվյալների ստանդարտներով և ստանդարտացման ուղղեցույցներով:

Գ Լ ՈՒ Խ 4

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՖՈՆԴԵՐ

Հոդված 11. Տարածական տվյալների ֆոնդերի տեսակներն ու առանձնահատկությունները

1. Հայաստանի Հանրապետությունում առանձնացվում են տարածական տվյալների հետևյալ ֆոնդերը՝

1) Պետական տարածական տվյալների ֆոնդ.

2) Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդ.

3) Պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալների ֆոնդ.

4) Տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տվյալների ֆոնդ.

5) այլ սուբյեկտների տարածական տվյալների ֆոնդեր, որոնք ներառում են գաղտնի տեղեկություններ չպարունակող տարածական տվյալներ և նյութեր, որոնք

ստացվել են Հայաստանի Հանրապետության տարբեր սուբյեկտների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տարածական տվյալների ստեղծման աշխատանքների արդյունքում:

Հոդված 12. Պետական տարածական տվյալների ֆոնդ

1. Պետական տարածական տվյալների ֆոնդն իր մեջ ներառում է

1) լիազոր մարմնի կողմից գեոդեզիական, քարտեզագրական, այդ թվում՝ Երկրի հեռազննման աշխատանքների իրականացման արդյունքում ստացված տարածական տվյալներ և մետատվյալներ, պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների արդյունքում ստացված գեոդեզիական և քարտեզագրական այլ նյութեր ու տարածական տվյալներ.

2) տեղեկություններ պետական գեոդեզիական ցանցի կետերի, պետական նիվելիրացման ցանցի և պետական գրավիմետրիկ ցանցի մասին.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց (իրենց համաձայնությամբ), պետական կառավարման մարմինների, պաշտոնատար անձանց կամ տեղական ինքնակառավարման մարմինների (իրենց համաձայնությամբ) կողմից կազմակերպված տեղագրական, գեոդեզիական, քարտեզագրական, հեռազննման աշխատանքների կատարման արդյունքում ստացված տարածական տվյալներ և մետատվյալներ.

4) տարածական տվյալների և մետատվյալների մասին տեղեկություններ, որոնք ներկայացվել են տարածական տվյալների գերատեսչական, տեղական ինքնակառավարման մարմինների ֆոնդերի և տարածական տվյալների այլ սուբյեկտների ֆոնդերի հիմնադիրների կողմից՝ սույն օրենքին համապատասխան:

2. Լիազոր մարմինը պետական տարածական տվյալների ֆոնդի վարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում դրա վարման տեխնոլոգիայի միասնականության սկզբունքների հիման վրա, սույն օրենքին համապատասխան ապահովելով դրանում պարունակվող

տեղեկությունների թարմացման պարբերականությունը և դրանց արժանահավատությունը:

3. Հայաստանի Հանրապետության պետական տարածական տվյալների ֆոնդի նյութերից տարածական տվյալներ և այլ տեղեկատվություն տրամադրելու համար գանձվում է սույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափերով վճար:

4. Պետական տարածական տվյալների ֆոնդի վարումը, այդ թվում՝ դրա մեջ տարածական տվյալների և մետատվյալների ներառումը, դրանց պահպանումը և շահագրգիռ անձանց տրամադրումը, իրականացնում է տարածական տվյալների լիազոր մարմնի կողմից:

5. Լիազոր մարմինը կազմում է տարածական տվյալների և մետատվյալների վերաբերյալ հաշվետվություններ և հրապարակում տեղեկություններ:

Հոդված 13. Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդը

1. Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդերը ներառում են տարածական տվյալներ և քարտեզագրական նյութեր, որոնք ստացվել են պետական կառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից տեղագրական, գեոդեզիական և քարտեզագրական, հեռազննման աշխատանքների կազմակերպման արդյունքում:

2. Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդը վարում են, այդ թվում՝ դրանում տարածական տվյալների և քարտեզագրական նյութեր ներառում, դրանք պահպանում, թարմացնում և թեմատիկ տարածական տվյալները շահագրգիռ անձանց տրամադրում են համապատասխան պետական կառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք:

3. Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդի պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է համապատասխան մարմինը կամ պաշտոնատար անձը՝ նախապես կարգի նախագիծը համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

4. Գերատեսչական ֆոնդեր վարող պետական կառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք, իրենց լիազորությունները պատշաճ իրականացնելու համար, պետք է միմյանց անվճար տրամադրեն իրենց կողմից ստեղծված տարածական տվյալների հավաքածուներն ու ծառայությունները, ներառյալ համապատասխան մետատվյալները:

Հոդված 14. Պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալների ֆոնդ

1. Պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալների ֆոնդը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է, այդ թվում՝ դրանում տարածական տվյալների և քարտեզագրական նյութեր ներառում, դրանք պահպանում, թարմացնում և թեմատիկ տարածական տվյալները տրամադրում է պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմինը:

Հոդված 15. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տվյալների ֆոնդեր

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տվյալների ֆոնդերը ներառում են տարածական տվյալներ և քարտեզագարական նյութեր, որոնք ստացվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղագրական, գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների կազմակերպման արդյունքում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տվյալների ֆոնդերը վարում են, այդ թվում՝ դրանում տարածական տվյալներ և նյութեր ներառում, դրանք պահպանում, թարմացնում և թեմատիկ տարածական տվյալները շահագրգիռ անձանց տրամադրում են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինները:

3. Տեղական ինքնակառավարման մարմնի տարածական տվյալների ֆոնդի պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է տվյալ համայնքի ղեկավարը՝ կարգի նախագիծը համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ:

Գ Լ ՈՒ Խ 5

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՍՏԵՂԾՈՒՄ, ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ՏԱՐԱԾՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հոդված 16. Տարածական տվյալների հավաքագրման, տրամադրման, տարածման, օգտագործման և կառավարման հիմնական սկզբունքները

1. Տարածական տվյալների հավաքագրման, տրամադրման, տարածման, օգտագործման և կառավարման հիմնական սկզբունքներն են՝

1) տարածական տվյալներ ստեղծողները պետք է տարածական տվյալները մշակեն սույն օրենքին համապատասխան.

2) տարածական տվյալներ ստեղծող, հավաքագրող, տնօրինող գերատեսչությունները և կազմակերպությունները պատասխանատու են իրենց տարածական տվյալների հավաքածուների, ծառայությունների տրամադրման և տարածման համար.

3) տարածական տվյալներ ստեղծող, հավաքագրող, տնօրինող սուբյեկտները պետք է ունենան տվյալների տրամադրման և հասանելիության տարբեր մակարդակներ.

4) օրենքով պահպանվող գաղտնիք չպարունակող տարածական տվյալները և մետատվյալները պետք է հասանելի դառնան տարածական տվյալների ծառայությունների, տարածական տվյալների ենթակառուցվածքների և այլ միջոցներով՝ առևտրային և ոչ առևտրային նպատակներով օգտագործման համար, եթե օրենսդրությամբ, քաղաքացիաիրավական պայմանագրերով այլ բան նախատեսված չէ.

5) ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններին, միջազգային կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց տեղեկատվություն տրամադրվում է վճարովի կամ անվճար հիմունքներով, որի մանրամասները սահմանվում են սույն օրենքի 19-րդ հոդվածով.

6) բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտահետազոտական կենտրոններին շահույթ չստանալու նպատակով ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար պետական կառավարման մարմինների կողմից ստեղծված տարածական տվյալները և ծառայությունները կառավարության սահմանած կարգով տրամադրվում են անվճար.

7) չսահմանափակված մատչելիությամբ տարածական տվյալների մետատվյալները հասանելի են անվճար բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց.

8) տարածական տվյալներ ստեղծող, հավաքագրող ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են սահմանափակել տարածական տվյալների և մետատվյալների հասանելիությունը.

9) բազային տարածական տվյալները կարող են տրամադրվել օգտվողներին Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալի ծառայությունների կիրառմամբ, «Էլեկտրոնային կառավարում» համակարգի միջգերատեսչական ինտեգրման հարթակի միջոցով փոխանցման եղանակով և լիազոր մարմնի համաձայնությամբ.

10) տարածական տվյալներ ստեղծող, հավաքագրող, տնօրինող գերատեսչությունները և կազմակերպությունները պարտավոր են լիազոր մարմնին տրամադրել իրենց կողմից կամ պատվիրակված լիազորությունների շրջանակներում այլ անձանց կողմից ստեղծված և թարմացվող բազային

տարածական տվյալներին առնչվող քարտեզագրական շերտերը իրենց համապատասխան հատկանիշային տվյալներով հետևյալ եղանակով.

ա. տարածական տվյալների առցանց ծառայությունների հասանելիության ապահովում.

բ. տարածական տվյալների փոխանցում համաձայնեցված ձևաչափով և որակով.

11) տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների հանրային հասանելիությունը կարող է սահմանափակվել, եթե դա նախատեսված է օրենքով:

Հոդված 17. Տարածական տվյալների մետատվյալների հավաքագրում, ստեղծում, տրամադրում և տարածում

1. Տարածական տվյալներ հավաքագրող, ստեղծող և տնօրինող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք տրամադրում են տարածական տվյալների հավաքածուները և ծառայությունները, պետք է ստեղծեն, տրամադրեն և տարածեն համապատասխան մետատվյալներ, ինչպես նաև դրանք պահպանեն և թարմացնեն տարածական տվյալների հավաքածուներին և ծառայություններին համապատասխան: Տարածական տվյալների և ծառայությունների մետատվյալների ստեղծման, պահպանման և թարմացման կանոնները սահմանվում են ոլորտները համակարգող լիազոր մարմնի կողմից:

2. Առնվազն հետևյալ բովանդակությունը կամ հետևյալ առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է պահպանվեն որպես տարածական տվյալների մետատվյալներ.

1) հիմնաբառեր.
2) դասակարգում.
3) աշխարհագրական դիրք (կոորդինատ).
4) որակի չափանիշներ.
5) հանրային մուտքի նկատմամբ առկա սահմանափակումներ

6) հասանելիության և օգտագործման նախադրյալները, ինչպես նաև համապատասխան դրամական վճարումներ.

7) սուբյեկտը, որը պատասխանատու է տարածական տվյալների հավաքագրման, կառավարման և տրամադրման համար:

3. Մետատվյալների բնութագրման վերաբերյալ մանրամասները կարգավորվում են մետատվյալներ ստեղծող մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով:

Հոդված 18. Տարածական տվյալների և մետատվյալների տրամադրում, տարածում, փոխանակում ցանցային (առցանց) ծառայությունների և տարածական տվյալների ենթակառուցվածքների միջոցով

1. Տարածական տվյալներ ստեղծող և տնօրինող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է տարածական տվյալների ենթակառուցվածքների միջոցով ապահովեն տարածական տվյալների և մետատվյալների տրամադրման, տարածման և փոխանակման առնվազն հետևյալ առցանց ծառայությունները.

1) որոնման ծառայություններ.

2) դիտման ծառայություններ.

3) ներբեռնման ծառայություններ.

4) փոխակերպման ծառայություններ.

5) էլեկտրոնային գործարքների վարման ծառայություններ:

2. Որոնման ծառայությունների համար պետք է երաշխավորվեն առնվազն հետևյալ որոնման չափանիշները.

1) հիմնաբառեր.

2) տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների դասակարգում.

3) աշխարհագրական դիրք (կոորդինատ).

4) որակի չափանիշներ.

3. Ծառայությունները պետք է հրապարակայնորեն հասանելի լինեն էլեկտրոնային ցանցերի միջոցով:

Հոդված 19. Պետական տարածական տվյալների ֆոնդի տեղեկատվության տրամադրման և դրանց առնչվող ծառայություններից օգտվելու համար գանձվող վճարները և արտոնությունները

1. Լիազոր մարմինը տարածական տվյալների տրամադրման և դրանց առնչվող ծառայությունների համար գանձում է հետևյալ վճարները.

1) կադաստրային հատակագծերի և քարտեզների բազային տեղեկատվության տրամադրում վեկտորային ֆորմատով՝ անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի (հողամասի) համար՝ 100 Հայաստանի Հանրապետության դրամ.

2) կադաստրային քարտեզների (հատակագծերի) թեմատիկ տեղեկատվության տրամադրում վեկտորային ֆորմատով՝ մեկ համայնքի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի) յուրաքանչյուր թեմատիկ շերտում (տվյալների համախմբում) ընդգրկված տեղեկատվության համար՝ 5000 դրամ.

3) լիազոր մարմնի հետ տեղեկատվության պարբերական թարմացման ծառայությունների պայմանագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության համայնքների (Երևան քաղաքում՝ վարչական շրջանների) կադաստրային քարտեզների բազային և թեմատիկ տեղեկատվության տրամադրում վեկտորային ֆորմատով՝

ա. սկզբնական տրամադրման համար՝ 300000 դրամ,

բ. տրամադրված քարտեզների յուրաքանչյուր հաջորդ թարմացման համար՝ 50000 դրամ.

4) տեղագրական հատակագծերի և քարտեզների, օրթոֆոտոհատակագծերի, օրթոֆոտոքարտեզների տրամադրում՝ վեկտորային ֆորմատով ամբողջական տեղեկատվությամբ հատակագծերի և քարտեզների, օրթոֆոտոհատակագծերի, օրթոֆոտոքարտեզների յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթի համար՝ 25000 դրամ.

5) վեկտորային ֆորմատով տեղագրական հատակագծերից և քարտեզներից առանձին հատվածներով տեղեկատվության տրամադրում՝

ա. 1:10 000 մասշտաբի դեպքում՝ 1 քառակուսի կիլոմետրի համար՝ 1000 դրամ,

բ. 1:25 000 մասշտաբի դեպքում՝ 1 քառակուսի կիլոմետրի համար՝ 250 դրամ,

գ. 1:50 000 մասշտաբի դեպքում՝ 1 քառակուսի կիլոմետրի համար՝ 62 դրամ.

6) թղթային կրիչով ամբողջական տեղեկատվությամբ հատակագծերի և քարտեզների, օրթոֆոտոհատակագծերի, օրթոֆոտոքարտեզների յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթի համար՝

ա. գունավոր տարբերակով՝ 6000 դրամ,

բ. սև-սպիտակ տարբերակով՝ 2000 դրամ.

7) գեոդեզիական ցանցի կետերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում՝ յուրաքանչյուր գեոդեզիական կետի կոորդինատի (աբսցիս, օրդինատ, բարձրություն) տրամադրման համար՝ 1000 դրամ.

8) անշարժ գույքի միավորի (հողամաս, շինություն) յուրաքանչյուր շրջադարձային կետի կամ անկյան կոորդինատի (աբսցիս, օրդինատ) տրամադրման համար՝ 100 դրամ.

9) թղթային տարբերակով ցանկացած մասշտաբի (15x15 սմ կամ 23x23 սմ) օդալուսանկարի տրամադրման համար՝ 1500 դրամ.

10) սույն մասի 1-ին և 5-րդ կետերով նախատեսված տեղեկատվության տրամադրումը թղթային տարբերակով կատարվում է սույն հոդվածի 1-ին և 5-րդ կետերով սահմանված վճարներին ավելացնելով հետևյալ վճարները՝

ա. A0 ֆորմատ՝ 5000 դրամ,

բ. A1 ֆորմատ՝ 2500 դրամ,

գ. A2 ֆորմատ՝ 1250 դրամ,

դ. A3 ֆորմատ՝ 625 դրամ,

ե. A4 ֆորմատ՝ 300 դրամ.

11) աշխարհագրական օբյեկտի անվանման վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար՝ 1000 դրամ.

12) Թեմատիկ քարտեզագրական նյութերի տրամադրման համար՝

ա. Հայաստանի Հանրապետության ազգային ատլաս՝ 20000 դրամ (յուրաքանչյուր հատորը),

բ. Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի էլեկտրոնային տարբերակի (ՋԵՅ ՓԻ Ի ՋԻ (JPEG)), (ՓԻ ԴԻ ԷՖ (PDF)) 1 էջը՝ 3000 դրամ,

գ. թեմատիկ քարտեզների թղթային տարբերակ՝ 100x70 սմ (քաշը՝ 200գ, թուղթը՝ կավճապատ)՝ 3000 դրամ, A3 ֆորմատ (քաշը՝ 200գ, թուղթը՝ կավճապատ)՝ 1000 դրամ, A4 ֆորմատ (քաշը՝ 200գ, թուղթը՝ կավճապատ)՝ 500 դրամ,

դ. էլեկտրոնային թեմատիկ քարտեզ (ՋԵՅ ՓԻ Ի ՋԻ (JPEG)), (ՓԻ ԴԻ ԷՖ (PDF))՝ 80000 դրամ.

13) Աշխարհագրական անվանումների տեղեկագրեր և տեղեկատու բառարանների տրամադրման համար՝

ա. մեկ տեղեկագրի համար՝ գունավոր տպագրություն՝ 3000 դրամ սև-սպիտակ տպագրություն՝ 1500 դրամ,

բ. մեկ տեղեկատու բառարանի համար՝ գունավոր տպագրություն՝ 3000 դրամ, սև-սպիտակ տպագրություն՝ 1500 դրամ.

14) Թեմատիկ քարտեզագրական նյութերի ինքնաշխատ եղանակով տրամադրում լիազոր մարմնի էլեկտրոնային հարթակի միջոցով (e-cadastre.am)

ա. Հայաստանի Հանրապետության ազգային ատլաս՝ 10000 դրամ (յուրաքանչյուր հատորը),

բ. Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի էլեկտրոնային տարբերակի (ՋԵՅ ՓԻ Ի ՋԻ (JPEG)), (ՓԻ ԴԻ ԷՖ (PDF)) 1 էջը՝ 600 դրամ

գ. էլեկտրոնային թեմատիկ քարտեզ (ՋԵՅ ՓԻ Ի ՋԻ (JPEG)), (ՓԻ ԴԻ ԷՖ (PDF))՝ 40000 դրամ:

15) Օրթոֆոտոհատակագծերի (Թի Այ Էֆ Էֆ (TIFF)), (Ջիո Թի Այ Էֆ Էֆ (GeoTIFF)) տրամադրում տեսանելի և ինֆրակարմիր տիրույթում (Ար Ջի Բի (RGB), (Էն Այ Ար/Սի Այ Ար) NIR/CIR))՝ անշարժ գույքի մեկ միավորի համար՝ 500 դրամ.

16) Պետական ռեֆերենց կայանների ծառայություններից մեկ սարքով օգտվելու համար՝

ա. 15 օր բաժանորդագրությամբ՝ 9000 դրամ,

բ. ամսական՝ 15000 դրամ,

գ. տարեկան բաժանորդագրությամբ՝ 162000 դրամ:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի միջոցով սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բազային տարածական տվյալների յուրաքանչյուր խմբի՝ (Օ Ջի Սի Վի Մի Էս (OGC WMS)) միջոցով առցանց հասանելիության ապահովման համար գանձվում է վճար հետևյալ չափերով.

1) տարեկան բաժանորդագրման համար՝ 400 000 դրամ,

2) ամսական բաժանորդագրման համար՝ 50 000 դրամ:

3. Սույն հոդվածով սահմանված տեղեկատվությունը տրամադրվում է դրա համար դիմումը ներկայացվելու օրվանից 3-րդ աշխատանքային օրը, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված դեպքերի: Սույն հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրվում է դիմումը ներկայացվելու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Դիմողի ցանկությամբ տեղեկատվությունը կարող է տրամադրվել նաև դիմումը ներկայացվելու օրվանից հետո՝ 2-րդ աշխատանքային օրը, որի դեպքում տեղեկատվության տրամադրման վճարը բազմապատկվում է երկու գործակցով:

5.Դիմողի ցանկությամբ տեղեկատվությունը կարող է տրամադրվել դիմումը ներկայացնելու օրը՝ աշխատանքային երկու ժամվա ընթացքում, որի դեպքում տեղեկատվության տրամադրման վճարը բազմապատկվում է վեց գործակցով:

6. Սույն հոդվածով սահմանված տեղեկատվությունը և դրան առնչվող ծառայությունները բարձրագույն ուսումնական հաստատություններին և

գիտահետազոտական կենտրոններին շահույթ չստանալու նպատակով ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին, վարչապետի աշխատակազմին, Ազգային ժողովի աշխատակազմին և պատգամավորներին, պետական կառավարման մարմիններին, մարզպետարաններին, դատարաններին, դատախազությանը և քրեական հետապնդման այլ մարմիններին, կենտրոնական բանկին, ինքնավար մարմիններին և անկախ պետական մարմիններին, մարդու իրավունքների պաշտպանին, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին տրամադրվում է անվճար՝ Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացման համար: Պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց սույն մասով սահմանված կարգով տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև կադաստրային, տեղագրական կամ հողաշինարարական քարտեզները կարող են վերջիններիս կողմից փոխանցվել այլ անձանց միայն Կառավարության որոշման հիման վրա, որի դիմաց գանձվում է սույն օրենքով սահմանված վճարները:

7. Ֆիզիկական, իրավաբանականանձինք ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գույքի մասին հայցվող տեղեկատվությունը, մինչև 10 էջ պատճենահանված փաստաթղթերի մասով, ազատվում են տեղեկատվության տրամադրման վճարից:

Գ Լ ՈՒ Խ 6

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հոդված 20. Ազգային տարածական տվյալների ձևավորման հիմնական սկզբունքները.

1. Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալներն պետք է ձևավորվի և մշակվի հետևյալ սկզբունքների հիման վրա.

1) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ սուբյեկտների կողմից միասնական կոորդինատային համակարգի և բազային տարածական տվյալների պարտադիր օգտագործում.

2) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման և զարգացման գործընթացների փոխկապակցվածությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, անվտանգության, պետական կառավարման առաջնահերթ խնդիրների լուծման, երկրի պաշտպանունակության և ազգային անվտանգության ապահովման հետ.

3) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների արդիականություն, լրիվություն, լիարժեք նկարագրություն, հուսալիություն, ամբողջականություն և ճշգրտություն.

4) տարածական տվյալների համատեղելիություն, որը հիմնված է միասնական բազային տարածական տվյալների բանկի օգտագործման, միասնական կոորդինատային համակարգի, միասնական տեխնիկական ուղեցույցների և նորմերի հիման վրա.

5) տարածական տվյալների, մետատվյալների և ծառայությունների փոխգործելիություն.

6) տեխնիկական ուղեցույցների (կանոնակարգերի) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային ստանդարտների ներդաշնակեցում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին.

7) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի, որպես բարդ կազմակերպչական և տեխնիկական համակարգ, աստիճանական և շարունակական զարգացումը,

8) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բազային և թեմատիկ տարածական տվյալների հավաքածուների ստեղծման և թարմացման հաջորդականության պլանավորում.

9) պետության աջակցությունը Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բազային և թեմատիկ տարածական տվյալների հավաքածուների ստեղծմանը և թարմացմանը.

10) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարումը ազգային գեոպորտալի միջոցով:

Հոդված 21. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում Կառավարության լիազորությունները

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) ազգային ծրագրերի, հայեցակարգերի և ռազմավարությունների մշակումը, հաստատումն ու իրականացում,

2) պետական վերահսկողության և հսկողության կազմակերպում,

3) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի օգտագործման և վարման կարգի սահմանում:

Հոդված 22. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի համակարգող լիազոր մարմնի լիազորությունները

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքը համակարգում է լիազոր մարմինը, որը ունի հետևյալ լիազորությունները.

1) մշակում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառում նորմատիվ իրավական ակտերի նախագծեր.

2) մշակում և Կառավարությանն առաջարկում է հաստատել ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ներդրման գործունեության ծրագիրը.

3) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների տրամադրողների և օգտագործողների միջև առկա պրակտիկաների մասին տեղեկատվության փոխանակումը.

4) ապահովում է լիազոր մարմնի ղեկավարին կից Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հարցերով խորհրդակցական մարմնի գործունեությունը.

5) սահմանում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի վարման կարգը.

6) ապահովում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացումն ու արդիականացումը՝ ըստ ոլորտային իրավասությունների.

7) իրականացնում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ներդրման և օգտագործման մշտադիտարկում, տարեկան հաշվետվությունների պատրաստում և ներկայացում Կառավարությանը.

8) ապահովում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացմանն առնչվող աշխատանքների իրականացումը.

9) իրականացնում է բազային տարածական տվյալների և դրանց մետատվյալների, ինչպես նաև մետատվյալների ընդունում և վերահսկում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով.

10) ազգային գեոպորտալի միջոցով, ապահովում է բազային տարածական տվյալների հասանելիությունը՝ ոլորտային կադաստրների ինտեգրման նպատակով.

11) մշակում և ներդրում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի համար ծրագրային, տեխնոլոգիական ապահովումը.

12) ապահովում է օգտվողների մուտքը ազգային գեոպորտալ.

13) օգտվողներին տրամադրում է բազային տարածական տվյալներ և դրանց մետատվյալներ՝ համաձայն ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման կարգի.

14) հավաքագրում և վերլուծում է տարածական տվյալների և մետատվյալների օգտագործողներից ստացվող տեղեկատվությունը, բացահայտում է առկա խնդիրները և միջոցներ է ձեռնարկում դրանց լուծման ուղղությամբ:

Հոդված 23. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձիք ապահովում են թեմատիկ տարածական տվյալների հավաքածուների թարմացումը, ստանդարտացումը և ինտեգրումը սույն օրենքին համապատասխան:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձիք ունեն հետևյալ պարտականությունները.

1) մասնակցում են քաղաքականության մշակմանը և իրականացմանը իրենց իրավասությունների շրջանակներում և օրենքին համապատասխան.

2) համագործակցում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքին վերաբերող հարցերի շուրջ.

3) ապահովում են սուբյեկտների կամ երրորդ անձանց հասանելիությունը տարածական տվյալների հավաքածուներին և ծառայություններին.

4) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմնին տրամադրում են բազային տարածական տվյալների քարտեզագրական շերտերը.

5) մասնակցում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի թեմատիկ տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցների մշակմանը.

6) նշանակում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով տվյալների մշակման, պահպանման, համակարգման և տրամադրման պատասխանատուներ.

7) ապահովում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով թեմատիկ տարածական տվյալների և մետատվյալների հասանելիությունը

8) ապահովում են իրենց ենթակայության տակ գտնվող տարածական տվյալների հասանելիություն ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով՝ համաձայնեցված ձևաչափով և որակով.

9) տեղադրում են տեղեկատվություն ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով տարածական տվյալների հասանելիության պայմանների մասին իրենց պաշտոնական կայք էջերում.

10) ռեսուրսներ են հատկացնում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի համապատասխան, իրենց գործունեության ոլորտին վերաբերող տարածական տվյալների արդյունավետ հավաքագրման, ստեղծման և վարման համար:

Հոդված 24. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման կարգը

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման կարգը, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման և մշակման կարգը սահմանում է կառավարությունը:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների փոխանակման, հասանելիության և օգտագործման կարգը հաստատում է կառավարությունը՝ սահմանելով.

1) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների, մետատվյալների, տեխնիկական և ծրագրային ապահովման փոխգործելիությունը ապահովող պահանջներ.

2) կիրառման կանոնները, որոնք սահմանում են տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների փոխգործելիության ապահովման տեխնիկական մեթոդները՝ հաշվի առնելով առկա տեխնոլոգիական հարթակների և էլեկտրոնային ծառայությունների կրկնակի օգտագործման առաջնահերթության կարգը, ինչպես նաև կատարման ժամկետները և ձևաչափերը:

Հոդված 25. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների, մետատվյալների և ծառայությունների կառավարումը

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով սպառողների (օգտագործողների) տարածական տվյալների հասանելիությունը տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով: Եթե տվյալների բանկում առկա են բազային տարածական տվյալների և այլ աղբյուրներից տարածական տվյալների միջև հակասություններ, ապա հուսալի է համարվում բազային տարածական տվյալների տեղեկատվությունը:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի մետատվյալները հրապարակվում են մետատվյալների շտեմարանում (կատալոգում), որոնց միջոցով շահառուները կարող են փնտրել և օգտվել տվյալների բազաներից կամ ծառայություններից:

3. Լիազոր մարմինը և այլ սուբյեկտները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումները մետատվյալների ամբողջականության և սահմանված որակին համապատասխանության ապահովման համար:

4. Լիազոր մարմինը ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բազային տարածական տվյալների հասանելիությունը առցանց քարտեզագրական ծառայության (Օ Ջի Սի ՎԻ ՖԻ ԷՍ, Վի Սի Էս, Վի Մի Էս(OGC WFS, WCS, WMS)) միջոցով սույն օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված մարմինների համար ապահովում է անվճար:

Հոդված 26. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային,պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գեոպորտալներ

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալների ցանցը ներառում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային

գեոպորտալը և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գեոպորտալները։

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմինը ստեղծում և վարում է էլեկտրոնային ծառայություն՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալ, որն ապահովում է բազային և թեմատիկ տարածական տվյալների և մետատվյալների հասանելիությունը, առկայության դեպքում ներառում է նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գեոպորտալները։

3. Պետական կառավարման մարմինների գեոպորտալներում ներառվում են թեմատիկ, ոլորտային տարածական տվյալները և մետատվյալներ, որոնք ստեղծվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ոլորտային խնդիրների լուծման համար։

4. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գեոպորտալները ստեղծվում և վարվում են համապատասխանաբար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից.

5. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալը պետք է.

1) հասանելի լինի համացանցի և հաղորդակցության այլ միջոցների միջոցով.

2) հասանելի լինի ընդհանուր արտածման (ինտերֆեյսի) միջոցով.

3) ներառի մետատվյալներ տարածական բոլոր տվյալների համար, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաքագրվել են տարածական տվյալներ ստեղծող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից.

4) ներառի ներբեռնման հասանելիություն բոլոր բաց տարածական տվյալների համար, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաքագրվել են տվյալներ ստեղծող կազամակերպությունների կողմից։

6. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալը ապահովում է առնվազը հետևյալ գործառույթները.

1) որոնում, որն ապահովում է տեղեկատվական ցանցերում տարածական տվյալների և տարածական տվյալների ծառայությունների բացահայտումը.

2) տարածական տվյալների դիտարկում, տարածական օբյեկտների բնութագրերի և մետատվյալների բովանդակության մասին տեղեկատվություն.

3) մուտք, որն ապահովում է տարածական տվյալների մշակման կամ դրանց պատճենները ստանալու հնարավորություն.

4) կոորդինատային գործողությունները, որոնք ապահովում են տարածական տվյալների կոորդինատների փոխակերպումը մեկ կոորդինատային համակարգից (կամ քարտեզի պրոեկցիայից) մյուսը:

7. Ազգային գեոպորտալի համընդհանուր հասանելիությունը որոնման և դիտման հնարավորությամբ, ապահովվում է անվճար:

Հոդված 27. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի աշխատանքների կազմակերպում և համակարգում

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացման ուղղված աշխատանքների համակարգումն ապահովելու համար լիազոր մարմնին կից ձևավորվում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի աշխատանքները համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Համակարգող խորհուրդ).

2. Համակարգող խորհուրդը համարվում է կոլեգիալ մարմին, որը չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

3. Համակարգող խորհուրդը խորհրդատվական դեր ունի տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի զարգացման քաղաքականության իրականացման գործում:

4. Համակարգող խորհուրդը բաղկացած է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հետազոտական և բարձրագույն ուսումնական

հաստատությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

5. Համակարգող խորհուրդի կազմը և գործունեության կարգը հաստատում է լիազոր մարմինը:

Հոդված 28. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ֆինանսավորման կարգը

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ֆինանսավորման կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման, ֆունկցիոնալության և զարգացման համար ֆինանսավորումը իրականացվում է պետական և համայնքային բյուջեների և օրենքով չարգելված այլ աղբյուրների հաշվին:

3. Պետության, համայնքի, օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից դրամաշնորհի կարգով տրամադրված միջոցների հաշվին ծրագրերը իրականացվում են լիազոր մարմնի համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 7

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 29. Տարածական տվյալների ոլորտում տեսչական վերահսկողությունը

1. Տարածական տվյալների ոլորտում տեսչական վերահսկողությունն իրականացնում է գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

Հոդված 30. Տարածական տվյալների ոլորտում վեճերի լուծման կարգը

1. Տարածական տվյալների ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարիններ, ինչպես նաև պաշտոնատար անձանց միջև ծագած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

2. Մի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, մյուս կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց միջև վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 31. Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

1. Սույն օրենքը խախտելու համար վարչական պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով», իսկ քրեական պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

Հոդված 32. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-9-րդ մասերի, 10-րդ հոդվածի 7-րդ մասի, 12-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերի, 13-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ մասերի, 14-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 2-րդ մասի, 16-րդ հոդվածի 10-րդ կետի, 18-րդ հոդվածի,

22-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի, 25-րդ հոդվածի 4-րդ մասի, 26-րդ հոդվածի 2-7-րդ մասերի, 28-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերը, 7-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի 1-9-րդ մասերը, 10-րդ հոդվածի 7-րդ մասը, 12-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերը, 13-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ մասերը, 14-րդ հոդվածը, 15-րդ հոդվածի 2-րդ մասը, 16-րդ հոդվածի 10-րդ կետը, 18-րդ հոդվածը, 22-րդ հոդվածը, 23-րդ հոդվածը, 25-րդ հոդվածի 4-րդ մասը, 26-րդ հոդվածի 2-7-րդ մասերը, 28-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերը ուժի մեջ են մտնում սույն օրենքի 5-րդ հովածի 1-ին մասի 3-8-րդ, 10-րդ կետերից, 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից, 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից, 24-րդ հոդվածից, 27-րդ հոդվածի 5-րդ մասից, 28-րդ հոդվածի 1-ին մասից բխող իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից, որոնք պետք է ընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երկու տարվա ընթացքում:

3. Պետական կառավարման մարմիններն ու պաշտոնատար անձիք, պետական կամ համայնքային հիմնարկներն ու կազմակերպությունները պետք է սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից 1 տարվա ընթացքում գույքագրեն պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալները և դրանք փոխանցեն պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական մարմնին:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Լրամշակված

Կ-376-20.09.2022-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ
ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տարածական տվյալների մշակման և կառավարման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է պետական տարածական տվյալների ֆոնդի տեղեկատվության տրամադրման և դրանց առնչվող ծառայություններից օգտվելու համար գանձվող վճարների չափերը և արտոնությունները :

2. Սույն օրենքի նպատակն է սահմանել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ սուբյեկտների իրավասությունները, միջազգային համագործակցության և վեճերի լուծման կարգը տարածական տվյալների բնագավառում, ինչպես նաև սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը:

Հոդված 2. Տարածական տվյալների ոլորտը կարգավորող օրենսդրությունը

1. Տարածական տվյալների կառավարման վերաբերյալ օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման

մասին» օրենքներից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

2. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում տարածական տվյալների հավաքածուի բաղադրիչ տարրերի մտավոր սեփականության կամ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պաշտոնատար անձանց՝ իրենց գործունեության ոլորտում դրանք տիրապետելու իրավունքի վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ***տարածական (երկրաչափական) տվյալ***՝ գեոդեզիական և քարտեզագրական գործունեության (աշխատանքների) արդյունքում ստեղծված տարածական օբյեկտի գտնվելու վայրի, տեսքի և այլ հատկությունների մասին տվյալ, որը սահմանված տարածա-ժամանակային, կոորդինատային համակարգում ունի որոշակի տեղադիրք և վեկտորային տվյալների հավաքածուներում ներկայացված են կետերով, գծերով, բազմանկյուններով կամ աշխարհագրական այլ բարդ պատկերներով:

2) ***ազգային տարածական տվյալ***՝ Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ տարածական տվյալներ (բազային և թեմատիկ), որոնք մասնավորեցման ենթակա չեն, ստեղծվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը.

3) ***տարածական տվյալների բանկ***՝ բազային կամ այլ տարածական և ատրիբուտային տվյալների համախումբ, որն անհրաժեշտ է տարածքների և օբյեկտների վիճակի, Երկրի հեռազննման համալիր տվյալների վրա հիմնված երևույթների և գործընթացների ~~մոնիթորինգի~~մշտադիտարկման, ինչպես նաև հանրապետական և տեղական մակարդակներում բնապահպանական,

սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման, կառավարման, տեղեկատվական, իրավական և այլ խնդիրների լուծման համար.

4) ***տարածական տվյալների մշակում*** ՝ տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, հավաքագրման, կարգավորման, պահպանման, փոփոխման, թարմացման, արտապատկերման (վիզուալիզացման), օգտագործման, տրամադրման, տարածման և փոխանցման մեկ կամ մի շարք գործողությունների իրականացում.

5) ***տարածական տվյալների ծառայությունները***՝ տարածական տեղեկատվության տրամադրումը համացանցի միջոցով, միևնույն ժամանակ օգտագործողին տրամադրում է տարածական տվյալների հետ աշխատելու համար գործիքներ և որը կարող է գործել ինքնաշխատ, անկախ՝ արտադրանքի կամ փոխկապակցված ծառայության տրամադրման տեսքով:

6) ***տարածական տվյալներ ստեղծող***՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, պաշտոնատար անձինք, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձինք, ովքեր ստեղծում կամ թարմացնում են տարածական տվյալներն ու մետատվյալները.

7) ***տարածական տվյալների ստանդարտացում***՝ ծրագրային ապահովման և տվյալների ինտեգրման միջոցառումների համախումբ, որոնք ուղղված են տարածական տվյալների հավաստիության, ամբողջականության և համապատասխանության մակարդակի բարձրացմանը.

8) ***տարածական տվյալներ օգտագործող***՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պաշտոնատար անձ, ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ, որոնք տարբեր նպատակներով օգտագործում են տարածական տվյալները.

9) ***տարածական օբյեկտ***՝ բնական և արհեստական օբյեկտներ, որոնց գտնվելու վայրը Երկրի վրա կարող է սահմանվել տարածական-ժամանակային կոորդինատների համակարգում.

10) ***ոլորտային տարածական տվյալներ՝*** պետական, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տարածական տվյալներ՝ պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների վերաբերյալ.

11) ***տարածական տվյալների ենթակառուցվածք՝*** տեխնոլոգիաների, նպատակային ծրագրերի, ստանդարտների, մարդկային ռեսուրսների և դրանց առնչվող գործունեությունների համախումբ, որոնք անհրաժեշտ են տարածական տվյալների և մետատվյալների ձեռք բերման, մշակման, տարածման, օգտագործման, պահպանման և ծառայությունների մատակարարման համար.

12) ***ազգային տարածական տվյալների ենթակառուցվածք՝*** ազգային տարածական տվյալների ձեռքբերման, մշակման, պահպանման, տարածման, օգտագործման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների, քաղաքականության, նկարագրված և իրականացված նորմերի և կանոնների հավաքածուների, աշխարհագրական տեղեկատվական հարթակի, միջազգային և Հայաստանի Հանրապետությունում ընդունված ազգային ստանդարտների, մետատվյալների և դրանց մշակման ծառայությունների, չափանիշների, մարդկային ռեսուրսների և հարակից գործողությունների տվյալների հասանելիության, փոխանակման և օգտագործման համաձայնության, համակարգման և ~~մոնիթորինգի~~ մշտադիտարկման մեխանիզմների ամբողջություն.

13) ***բացային տարածական տվյալներ՝*** համընդհանուր հասանելի, գաղտնիություն չպարունակող (բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության համար հավաքագրված տվյալների), բաց հրապարակման համար նախատեսված, ժամանակի մեջ կայուն տարածական դիրքով առանձնացվող և այլ տարածական օբյեկտների համար կողմնորոշման հիմք հանդիսացող, առավել օգտագործվող տարածական օբյեկտների թվային տվյալներ.

14) ***թեմատիկ տարածական տվյալներ***՝ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից իրենց մասնագիտական գործունեության շրջանակներում ստեղծված տարածական տվյալներ (տնտեսական, գիտական, կրթական և այլ).

15) ***ազգային գեոպորտալ***՝ համացանցային, սարքածրագրային համալիր՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հիմնական տարր, որն ապահովում է տարածական տվյալների հասանելիությունը վերտեխնոլոգիաների միջոցով.

16) ***մետատվյալներ***՝ տարածական տվյալներ և ծառայություններ նկարագրող տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ցուցակագրումը, որոնումը, տվյալների ճիշտ գնահատումն ու օգտագործումը տարբեր նպատակների համար.

17) ***փոխգործելիություն***՝ համակարգերի ու տեխնոլոգիաների միջև տեղեկատվություն փոխանակելու ունակություններ և փոխանակման արդյունքում համատեղ շահերի պահպանման համար անհրաժեշտ համաձայնեցված գործողություններ.

18) **աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ)՝** սարքածրագրային տեղեկատվական համակարգ, որը նախատեսված է տարածական տվյալների հավաքագրման, պահպանման, մշակման, վերլուծության, քարտեզագրման, մոդելավորման, կառավարման և տարածման համար:

19) **ատրիբուտային (հատկանիշային) տվյալներ՝** տարածական տվյալների հետ փոխկապակցված տեղեկատվություն է, որոնք նկարագրում են վեկտորային օբյեկտների առանձնահատկությունները: Այլ կերպ ասած, աշխարհագրական տեղեկատվություն են, որոնք կապված են ԱՏՀ-ում կետային, գծային կամ տարածական մոդելների հետ:

ԳԼՈՒԽ 2

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ~~ԵՎ~~, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ,~~<~~ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4. Տարածական տվյալների ոլորտում կառավարման հիմնական սկզբունքները

1. Տարածական տվյալների ոլորտում կառավարման հիմնական սկզբունքներն են՝

1) տարածական տվյալների ճշգրտության և հուսալիության ապահովումը ~~մշտական մոնիթորինգի~~մշտադիտարկման, գիտատեխնիկական փորձաքննության և տարածական տվյալների, մետատվյալների հավաքագրման և վերահսկման միջոցով.

2) համացանցի միջոցով՝ անվճար և վճարովի հիմունքներով գաղտնիության տարրեր չպարունակող տարածական տվյալների և մետատվյալների բաց հասանելիությունը տարածական տվյալներ օգտագործողներին.

3) բազային և թեմատիկ տարածական տվյալներում պետական գաղտնիք հանդիսացող և օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկատվության բացակայությունը.

4) տարածական տվյալների, մետատվյալների ստեղծումն ու մշակումը, համացանցային ծառայությունների մատուցումը.

5) տարածական տվյալների և մետատվյալների ստեղծումն ու պահպանումը անհատի, հասարակության և պետության անվտանգությանն ուղղված սպառնալիքների և կեղծիքների կանխարգելման նպատակներով:

Հոդված 5. Տարածական տվյալների ոլորտում Կառավարության լիազորությունները

1. Տարածական տվյալների ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) տարածական տվյալների ոլորտում պետական և այլ ծրագրերի մշակումը, հաստատումը և իրականացումը.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց օգտագործման համար հասանելի տարածական տվյալների ցանկի սահմանումը.

3) լիազոր պետական մարմնին տարածական տվյալների տրամադրման կարգի սահմանումը.

4) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա, գործունեության արդյունքում Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքագրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների ստեղծման նպատակով օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման համար թույլտվության տրամադրման կամ մերժման հիմքերի և կարգի սահմանումը.

5) պետական տարածական տվյալների ֆոնդի ստեղծման, պահպանման, տեղեկատվության տրամադրման (հրապարակման) կարգի հաստատումը.

6) օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա պետություններին տարածական տվյալների տրամադրման թույլտվության կարգի և մերժման հիմքերի սահմանումը.

7) պետական և ծառայողական գաղտնիք բովանդակող տարածական տվյալների հավաքագրման, տրամադրման, տարածման, օգտագործման կարգի սահմանումը.

8) լիազոր պետական մարմնի հետ տեղեկատվության պարբերական թարմացման ծառայությունների պայմանագրի օրինակելի ձևը և դրա հիման վրա տեղեկատվության տրամադրման կարգի հաստատումը.

9) հաստատում է տեխնիկական կանոնակարգման ոլորտում նորմատիվ իրավական ակտեր և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր.

10) հաստատում է տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված Կառավարության լիազորությունները սպառիչ չեն և սույն օրենքով կարող են սահմանվել այլ լիազորություններ:

Հոդված 6. Տարածական տվյալների ոլորտում լիազոր պետական մարմնի լիազորությունները

1. Տարածական տվյալների ոլորտում լիազոր պետական կառավարման մարմինը Կադաստրի կոմիտեն է (այսուհետ՝ նաև լիազոր մարմին).

2. Լիազոր մարմինը.

1) մասնակցում է տարածական տվյալների ոլորտում միասնական պետական քաղաքականության ձևավորմանը և իրականացմանը.

2) լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով մշտադիտարկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, այլ կազմակերպությունների կողմից տարածական տվյալների ստեղծումը, մշակումը, օգտագործումը կամ տարածումը.

3) ստուգում է ազգային գեոպորտալ մուտքագրվող թեմատիկ և բազային տարածական տվյալների՝ նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերին համապատասխանությունը մուտքագրման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Անհամապատասխանության դեպքում մերժում է թեմատիկ և բազային տարածական տվյալների մուտքագրումը: 5 աշխատանքային օրվա ընթացքում թեմատիկ և բազային տարածական տվյալների մուտքագրումը չմերժելու դեպքում տվյալները համարվում են մուտքագրված ազգային գեոպորտալ:

4) իրականացնում է բազային տարածական տվյալների, մետատվյալների և դրանց առցանց ծառայությունների ստեղծում ու մշակում.

5) պատվիրում է տարածական տվյալների ոլորտում գիտահետազոտական, փորձարարական աշխատանքներ, իրականացնում կամ պատվիրում է տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների մշակումը և ներդրումը.

6) տարածական տվյալների ոլորտում իրականացնում է միջազգային համագործակցություն.

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազոր մարմնի լիազորությունները սպառիչ չեն և սույն օրենքով կարող են սահմանվել այլ լիազորություններ:

Հոդված 7. Տարածական տվյալների ոլորտում պետական կառավարման այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները

1. Տարածական տվյալների ոլորտում պետական կառավարման այլ մարմինները, տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք՝

1) իրականացնում են թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների, մետատվյալների և դրանց առցանց ծառայությունների ստեղծման և մշակման աշխատանքներ.

2) ապահովում են օրենքով պահպանվող գաղտնիք չպարունակող թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների հասանելիությունը.

3) ապահովում են թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների ստանդարտացումը «Ստանդարտացման մասին» օրենքով սահմանված կարգով և ստանդարտացման ուղեցույցների հիման վրա

4) օգտագործում են տարածական տվյալները և մետատվյալները իրենց լիազորություններն իրականացնելու համար.

5) ապահովում են թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների և մետատվյալների օրինականությունը, ճշգրտությունը, հուսալիությունն ու անվտանգությունը.

6) ապահովում են թեմատիկ և ոլորտային տարածական տվյալների և մետատվյալների տրամադրումը կամ հասանելիությունը լիազոր մարմնին.

7) ստեղծում և վարում են թեմատիկ տարածական տվյալների ենթակառուցվածքներ.

8) իրենց իրավասության սահմաններում իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, պետական սահմաններին վերաբերող տարածական տվյալների հավաքագրում և պահպանում:

2. Տարածական տվյալների ոլորտում պետական կառավարման այլ մարմինները, տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են իրականացնել սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Գ Լ ՈՒ Խ 3

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՄ

Հոդված 8. Տարածական տվյալների ոլորտում աշխատանքի տեսակները

1. Տարածական տվյալների ոլորտում աշխատանքները բաժանված են հետևյալ տեսակների.

1) տարածական տվյալների և մետատվյալների ստեղծում, հավաքագրում, համակարգում, պահպանում, թարմացում, արտապատկերում, օգտագործում, տրամադրում, տարածում.

2) օդատիեզերական լուսանկարահանման (հեռազննման) նյութերի մշակում և դրա արդյունքում տարածական տվյալների ստեղծում.

3) տարբեր նպատակների համար ԱՏՀ-երի և տարածական տվյալների ենթակառուցվածքների ստեղծում, գործարկում, օգտագործում, վարում.

4) տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների ստեղծում, որոնք օգտագործվում են տարածական տվյալների մշակման և տարածման համար.

5) գեոպորտալների և դրանց առանձին գործառույթների ստեղծում և պահպանում.

6) տարածական տվյալների և մետատվյալների, դրանց առցանց ծառայությունների որակի վերաբերյալ գիտատեխնիկական փորձաքննության իրականացում.

7) տարածական տվյալների բազաների, մետատվյալների շտեմարանների, առցանց ծառայությունների, ԱՏՀ-երի, գեոպորտալների, տարածական տվյալների ոլորտում այլ տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների ստեղծմանն ուղղված գիտահետազոտական, փորձարարական և գիտատեխնոլոգիական աշխատանքների իրականացում.

8) տեխնիկական կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակում.

9) այլ աշխատանքների իրականացում՝ ԱՏՀ-երի և տարածական տվյալների ենթակառուցվածքների գործունեությունն ու զարգացումն ապահովելու համար:

Հոդված 9. Տարածական տվյալների ստեղծում

1. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների սահմաններում բազային տարածական տվյալներին առնչվող տարրերի ստեղծման աշխատանքներ իրականացնելիս համապատասխան նախագծերը, տեխնիկական առաջադրանքները, ինչպես նաև տվյալ աշխատանքների արդյունքում ստեղծված տարածական տվյալները՝ մինչև դրանք ընդունելը պետք է կարծիք ստանալու համար ներկայացնեն լիազոր մարմնին, բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության համար բազային տարածական տվյալների ստեղծման աշխատանքների, որոնք լիազոր մարմնին կարող են տրամադրվել իրավասու մարմինների որոշմամբ:

2. Լիազոր մարմինը սույն հոդվածի 1-ին մասում նշված նախագծերը, տեխնիկական առաջադրանքները և տարածական տվյալները ստանալուց հետո 15 օրվա ընթացքում ուսումնասիրում և համաձայնեցման ներկայացրած մարմնին է տրամադրում սույն օրենքին, «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքին, դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերին և ստանդարտներին, ստանդարտացման ուղեցույցներին համապատասխանության վերաբերյալ դրական կամ բացասական կարծիք: 15 օրվա ընթացքում կարծիք չտրամադրելու դեպքում լիազոր մարմնի կարծիքը համարվում է դրական:

3. Բացասական կարծիքը պետք է լինի պատշաճ պատճառաբանված և պարունակի բացասական կարծիքի բոլոր հիմքերը՝ համապատասխան հղումներով:

4. Բացասական կարծիքի առկայության դեպքում բազային տարածական տվյալը չի կարող ներառվել ազգային գեոպորտալում:

5. Բացասական կարծիք տրամադրվելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասում նշված սուբյեկտները կարող են վերացնել կարծիքում նշված անհամապատասխանությունները և ներկայացնել լիազոր մարմին՝ համաձայնեցման, որի դեպքում կիրառվում են սույն հոդվածի 2-5-րդ մասերը:

6. Պետական կառավարման ~~համակարգի~~ մարմինները՝ իրենց վերապահված գործառույթների իրականացման գործընթացում ստեղծված բազային տարածական տվյալներին առնչվող տարրերը պետք է կառավարության սահմանած կարգով տրամադրեն լիազոր մարմնին՝ բացառությամբ ազգային անվտանգության և պաշտպանության համար հավաքագրված սահմանափակ մատչելիությամբ տվյալների, որոնք լիազոր մարմնին կարող են տրամադրվել իրավասու մարմինների որոշմամբ:

7. Օտարերկրյա Ֆիզիկական և իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքագրման աշխատանքներն իրականացնում են կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա՝ բացառությամբ այն տվյալների, որոնք կարող են ձեռք բերվել տիեզերական արբանյակների միջոցով կամ դրանց գրասենյակային մշակման արդյունքում:

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և իրավաբանական անձինք «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ բազային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, մշակման կամ հավաքագրման աշխատանքներն իրականացնում են կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա՝ բացառությամբ այն տվյալների, որոնք կարող են ձեռք

բերվել տիեզերական արբանյակների միջոցով կամ դրանց գրասենյակային մշակման արդյունքում:

9. Բացառությամբ գիտատեխնիկական և շինարարական աշխատանքների նախագծման նպատակով իրականացվող օդալուսանկարահանման աշխատանքների, Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների ստեղծման նպատակով օդալուսանկարահանման աշխատանքներն իրականացվում են կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա:

10. Հայաստանի Հանրապետությունում գաղտնիք չպարունակող տարածական տվյալների ստեղծումը, մշակումը և պահպանումը կատարվում է ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգում:

11. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տարածական տվյալները ու մետատվյալները ստեղծվում կամ թարմացվում են տարածական տվյալների ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

12. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց ստեղծած կամ այդ սուբյեկտների կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում այլ անձանց կողմից մշակվող և պահպանվող տարածական տվյալները Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի անբաժանելի մաս են:

Հոդված 10. Տարածական տվյալների խմբերը

1. Հայաստանի Հանրապետությունում տարածական տվյալները դասակարգվում են երկու հիմնական խմբերի՝ բազային տարածական տվյալներ, թեմատիկ տարածական տվյալներ:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից ստեղծված բազային տարածական տվյալները համարվում են պետական սեփականություն՝ անկախ դրանց ֆինանսավորման աղբյուրներից և մասնավորեցման ենթակա չեն:

3. Բազային տարածական տվյալների այն մասը, որը ենթակա է հրապարակման չպետք է պարունակի օրենքով պահպանվող գաղտնիք:

4. Բազային տարածական տվյալները օգտագործվում են տարբեր նպատակներով ստեղծվող, ազգային, ոլորտային և տեղական ԱՏՀ-երում, կադաստրների և ռեգիստրների թեմատիկ և ոլորտային տարածական տվյալներում:

5. Բազային տարածական տվյալները և դրանց համապատասխան ստեղծված տեղեկատվական բազան (հատկանիշային տվյալներ), պարտադիր են բոլոր տարածական տվյալներ ստեղծող, մշակող, տարածող, տնօրինող կազմակերպությունների համար:

6. Որպես պարտադիր տեղեկատվություն, բազային տարածական տվյալների բանկն ընդգրկում է տեղադիրքի բաց գեոկապակցված (գեոռեֆերենց) պատկերներ, որոնք հիմնված են տիեզերական կամ օդալուսանկարների տվյալների վրա, կանոնակարգված տարածաժամանակային կոորդինատային համակարգերի վերաբերյալ տվյալներ, որոնք դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) վարչական սահմաններ.
2) անշարժ գույք («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված կադաստրային քարտեզ).
3) գնահատում.
4) իրավունք (գույքային իրավունքի տեսակ).
5) հողամասի նպատակային և գործառնական նշանակություն (հողատեսք).
6) հասցե.
7) աշխարհագրական անվանումներ.
8) մակերևույթային ջրեր.

9) պլանաբարձունքային հիմք.

10) ռելիեֆ.

11) ճանապարհատրանսպորտային ցանց.

12) օդատիեզերական լուսանկարահանման տվյալներ:

7. Բազային տարածական տվյալների բանկի ստեղծումը լիազոր մարմնի կողմից իրականացվում է բազային տարածական տվյալների հավաքագրման, ընտրության և ինտեգրման միջոցով:

8. Բազային տարածական տվյալների մեջ ներառված տեղեկատվությունը փոփոխվում և անընդհատ բարելավվում է: Բազային տարածական տվյալների մեջ ներառված տեղեկատվության կազմը սահմանվում են տարածական տվյալների ստանդարտներով և ստանդարտացման ուղղեցույցներով:

9. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի թեմատիկ տարածական տվյալների խմբերը, դրանց ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանվում են տարածական տվյալների ստանդարտներով և ստանդարտացման ուղղեցույցներով:

Գ Լ ՈՒ Խ 4

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ, ~~ՔԱՐՏԵԶԱԳՐԱԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ~~ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՖՈՆԴԵՐ

Հոդված 11. Տարածական տվյալների ~~պահպանման քարտեզագրագեոդեզիական~~ ֆոնդերի տեսակներն ու առանձնահատկությունները

1. Հայաստանի Հանրապետությունում առանձնացվում են տարածական տվյալների ~~պահպանման~~ հետևյալ ֆոնդերը՝

1) Պետական տարածական տվյալների ֆոնդ.

2) Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդ.

3) Պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալների ֆոնդ.

4) Տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տվյալների ֆոնդ.

5) այլ սուբյեկտների տարածական տվյալների ֆոնդեր, որոնք ներառում են գաղտնի տեղեկություններ չպարունակող տարածական տվյալներ և նյութեր, որոնք ստացվել են Հայաստանի Հանրապետության տարբեր սուբյեկտների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տարածական տվյալների ստեղծման աշխատանքների արդյունքում:

Հոդված 12. Պետական տարածական տվյալների ֆոնդ

1. Պետական տարածական տվյալների ֆոնդն իր մեջ ներառում է

1) լիազոր մարմնի կողմից գեոդեզիական, քարտեզագրական~~ և~~, այդ թվում՝ Երկրի հեռազննման աշխատանքների իրականացման արդյունքում ստացված տարածական տվյալներ և մետատվյալներ, պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների արդյունքում ստացված գեոդեզիական և քարտեզագրական այլ նյութեր ու տարածական տվյալներ.

2) տեղեկություններ պետական գեոդեզիական ցանցի կետերի, պետական նիվելիրացման ցանցի և պետական գրավիմետրիկ ցանցի մասին.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց (իրենց համաձայնությամբ), պետական կառավարման մարմինների, պաշտոնատար անձանց կամ տեղական ինքնակառավարման մարմինների (իրենց համաձայնությամբ) կողմից կազմակերպված տեղագրական, գեոդեզիական, քարտեզագրական, հեռազննման աշխատանքների կատարման արդյունքում ստացված տարածական տվյալներ և մետատվյալներ.

4) տարածական տվյալների ~~(տարածական~~ մետատվյալների~~)~~ մասին տեղեկություններ, որոնք ներկայացվել են տարածական տվյալների գերատեսչական, տեղական ինքնակառավարման մարմինների ֆոնդերի և տարածական տվյալների այլ սուբյեկտների ֆոնդերի հիմնադիրների կողմից՝ սույն օրենքին համապատասխան:

2. Լիազոր մարմինը պետական տարածական տվյալների ֆոնդի վարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում դրա վարման տեխնոլոգիայի միասնականության սկզբունքների հիման վրա, սույն օրենքին համապատասխան ապահովելով դրանում պարունակվող տեղեկությունների թարմացման պարբերականությունը և դրանց արժանահավատությունը:

3. Հայաստանի Հանրապետության պետական տարածական տվյալների ֆոնդի նյութերից տարածական տվյալներ և այլ տեղեկատվություն տրամադրելու համար գանձվում է սույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափերով վճար:

4. Պետական տարածական տվյալների ֆոնդի վարումը, այդ թվում՝ դրա մեջ տարածական տվյալների և մետատվյալների ներառումը, դրանց պահպանումը և շահագրգիռ անձանց տրամադրումը, իրականացնում է տարածական տվյալների լիազոր մարմնի կողմից:

5. Լիազոր մարմինը կազմում է տարածական տվյալների ~~(տարածական և~~ մետատվյալների~~)~~ վերաբերյալ հաշվետվություններ և հրապարակում տեղեկություններ:

Հոդված 13. Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդը

1. Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդերը ներառում են տարածական տվյալներ և քարտեզագրական նյութեր, որոնք ստացվել են պետական կառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից տեղագրական, գեոդեզիական և քարտեզագրական, հեռազննման աշխատանքների կազմակերպման արդյունքում:

2. Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդը վարում են, այդ թվում՝ դրանում տարածական տվյալների և քարտեզագրական նյութեր ներառում, դրանք պահպանում, թարմացնում և թեմատիկ տարածական տվյալները շահագրգիռ անձանց տրամադրում են համապատասխան պետական կառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք:

3. Գերատեսչական տարածական տվյալների ֆոնդի պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է համապատասխան մարմինը կամ պաշտոնատար անձը՝ նախապես կարգի նախագիծը համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

4. Գերատեսչական ֆոնդեր վարող պետական կառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք, իրենց լիազորությունները պատշաճ իրականացնելու համար, պետք է միմյանց անվճար տրամադրեն իրենց կողմից ստեղծված տարածական տվյալների հավաքածուներն ու ծառայությունները, ներառյալ համապատասխան մետատվյալները:

Հոդված 14. Պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալների ֆոնդ

1. Պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալների ֆոնդը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է, այդ թվում՝ դրանում տարածական տվյալների և քարտեզագրական նյութեր ներառում, դրանք պահպանում, թարմացնում և թեմատիկ տարածական տվյալները տրամադրում է պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմինը:

Հոդված 15. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տվյալների ֆոնդեր

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տվյալների ֆոնդերը ներառում են տարածական տվյալներ և քարտեզագարական նյութեր, որոնք ստացվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղագրական, գեոդեզիական և քարտեզագրական~~, Երկրի հեռազննման~~ աշխատանքների կազմակերպման արդյունքում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածական տվյալների ֆոնդերը վարում են, այդ թվում՝ դրանում տարածական տվյալներ և նյութեր ներառում, դրանք պահպանում, թարմացնում և թեմատիկ տարածական տվյալները

շահագրգիռ անձանց տրամադրում են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինները:

3. Տեղական ինքնակառավարման մարմնի տարածական տվյալների ֆոնդի պահպանման և տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է տվյալ համայնքի ղեկավարը՝ կարգի նախագիծը համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ:

Գ Լ ՈՒ Խ 5

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՍՏԵՂԾՈՒՄ, ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ՏԱՐԱԾՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հոդված 16. Տարածական տվյալների հավաքագրման, տրամադրման, տարածման, օգտագործման և կառավարման հիմնական սկզբունքները

1. Տարածական տվյալների հավաքագրման, տրամադրման, տարածման, օգտագործման և կառավարման հիմնական սկզբունքներն են՝

1) տարածական տվյալներ ստեղծողներ~~ը, հավաքագրող, տնօրինող գերատեսչությունները և կազմակերպությունները~~ պետք է ~~իրենց~~ տարածական տվյալներ~~ի հավաքածուները կառավարեն~~ մշակեն սույն օրենքին համապատասխան.

2) տարածական տվյալներ ստեղծող, հավաքագրող, տնօրինող գերատեսչությունները և կազմակերպությունները պատասխանատու են իրենց տարածական տվյալների հավաքածուների, ծառայությունների տրամադրման և տարածման համար.

3) տարածական տվյալներ ստեղծող, հավաքագրող, տնօրինող սուբյեկտները պետք է ունենան տվյալների տրամադրման և հասանելիության տարբեր մակարդակներ.

4) օրենքով պահպանվող գաղտնիք չպարունակող տարածական տվյալները և մետատվյալները պետք է հասանելի դառնան տարածական տվյալների ծառայությունների, տարածական տվյալների ենթակառուցվածքների և այլ

միջոցներով՝ առևտրային և ոչ առևտրային նպատակներով օգտագործման համար, եթե օրենսդրությամբ, քաղաքացիաիրավական պայմանագրերով այլ բան նախատեսված չէ.

5) ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններին, միջազգային կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց տեղեկատվություն տրամադրվում է վճարովի կամ անվճար հիմունքներով, որի մանրամասները սահմանվում են սույն օրենքի 19-րդ հոդվածով.

6) բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտահետազոտական կենտրոններին շահույթ չստանալու նպատակով ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար պետական կառավարման մարմինների կողմից ստեղծված տարածական տվյալները և ծառայությունները կառավարության սահմանած կարգով տրամադրվում են անվճար.

7) չսահմանափակված մատչելիությամբ տարածական տվյալների մետատվյալները հասանելի են անվճար բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց.

8) տարածական տվյալներ ստեղծող, հավաքագրող ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են սահմանափակել տարածական տվյալների և մետատվյալների հասանելիությունը.

9) բազային տարածական տվյալները կարող են տրամադրվել օգտվողներին Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալի ծառայությունների կիրառմամբ, «Էլեկտրոնային կառավարում» համակարգի միջգերատեսչական ինտեգրման հարթակի միջոցով փոխանցման եղանակով և լիազոր մարմնի համաձայնությամբ.

10) տարածական տվյալներ ստեղծող, հավաքագրող, տնօրինող գերատեսչությունները և կազմակերպությունները պարտավոր են լիազոր մարմնին տրամադրել իրենց կողմից կամ պատվիրակված լիազորությունների շրջանակներում այլ անձանց կողմից ստեղծված և թարմացվող բազային տարածական տվյալներին առնչվող քարտեզագրական շերտերը իրենց համապատասխան հատկանիշային տվյալներով հետևյալ եղանակով.

ա. տարածական տվյալների առցանց ծառայությունների հասանելիության ապահովում.

բ. տարածական տվյալների փոխանցում համաձայնեցված ձևաչափով և որակով.

11) տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների հանրային հասանելիությունը կարող է սահմանափակվել, եթե դա նախատեսված է օրենքով:

Հոդված 17. Տարածական տվյալների մետատվյալների հավաքագրում, ստեղծում, տրամադրում և տարածում

1. Տարածական տվյալներ հավաքագրող, ստեղծող և տնօրինող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք տրամադրում են տարածական տվյալների հավաքածուները և ծառայությունները, պետք է ստեղծեն, տրամադրեն և տարածեն համապատասխան մետատվյալներ, ինչպես նաև դրանք պահպանեն և թարմացնեն տարածական տվյալների հավաքածուներին և ծառայություններին համապատասխան: Տարածական տվյալների և ծառայությունների մետատվյալների ստեղծման, պահպանման և թարմացման կանոնները սահմանվում են ոլորտները համակարգող լիազոր մարմնի կողմից:

2. Առնվազն հետևյալ բովանդակությունը կամ հետևյալ առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է պահպանվեն որպես տարածական տվյալների մետատվյալներ.

1) հիմնաբառեր.

2) դասակարգում.

3) աշխարհագրական դիրք (կոորդինատ).

4) որակի չափանիշներ.

5) հանրային մուտքի նկատմամբ առկա սահմանափակումներ

6) հասանելիության և օգտագործման նախադրյալները, ինչպես նաև համապատասխան դրամական վճարումներ.

7) սուբյեկտը, որը պատասխանատու է տարածական տվյալների հավաքագրման, կառավարման և տրամադրման համար:

3. Մետատվյալների բնութագրման վերաբերյալ մանրամասները կարգավորվում են մետատվյալներ ստեղծող մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով:

Հոդված 18. Տարածական տվյալների և մետատվյալների տրամադրում, տարածում, փոխանակում ցանցային (առցանց) ծառայությունների և տարածական տվյալների ենթակառուցվածքների միջոցով

1. Տարածական տվյալներ ստեղծող և տնօրինող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է տարածական տվյալների ենթակառուցվածքների միջոցով ապահովեն տարածական տվյալների և մետատվյալների տրամադրման, տարածման և փոխանակման առնվազն հետևյալ առցանց ծառայությունները.

1) որոնման ծառայություններ.

2) դիտման ծառայություններ.

3) ներբեռնման ծառայություններ.

4) փոխակերպման ծառայություններ.

5) էլեկտրոնային գործարքների վարման ծառայություններ:

2. Որոնման ծառայությունների համար պետք է երաշխավորվեն առնվազն հետևյալ որոնման չափանիշները.

1) հիմնաբառեր.

2) տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների դասակարգում.

3) աշխարհագրական դիրք (կոորդինատ).

4) որակի չափանիշներ.

3. Ծառայությունները պետք է հրապարակայնորեն հասանելի լինեն էլեկտրոնային ցանցերի միջոցով:

Հոդված 19. Պետական տարածական տվյալների ֆոնդի տեղեկատվության տրամադրման և դրանց առնչվող ծառայություններից օգտվելու համար գանձվող վճարները և արտոնությունները

1. Լիազոր մարմինը տարածական տվյալների տրամադրման և դրանց առնչվող ծառայությունների համար գանձում է հետևյալ վճարները.

1) կադաստրային հատակագծերի և քարտեզների բազային տեղեկատվության տրամադրում վեկտորային ֆորմատով՝ անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի (հողամասի) համար՝ 100 Հայաստանի Հանրապետության դրամ.

2) կադաստրային քարտեզների (հատակագծերի) թեմատիկ տեղեկատվության տրամադրում վեկտորային ֆորմատով՝ մեկ համայնքի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի) յուրաքանչյուր թեմատիկ շերտում (տվյալների համախմբում) ընդգրկված տեղեկատվության համար՝ 5000 դրամ.

3) լիազոր մարմնի հետ տեղեկատվության պարբերական թարմացման ծառայությունների պայմանագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության համայնքների (Երևան քաղաքում՝ վարչական շրջանների) կադաստրային քարտեզների բազային և թեմատիկ տեղեկատվության տրամադրում վեկտորային ֆորմատով՝

ա. սկզբնական տրամադրման համար՝ 300000 դրամ,

բ. տրամադրված քարտեզների յուրաքանչյուր հաջորդ թարմացման համար՝ 50000 դրամ.

4) տեղագրական հատակագծերի և քարտեզների, օրթոֆոտոհատակագծերի, օրթոֆոտոքարտեզների տրամադրում՝ վեկտորային ֆորմատով ամբողջական տեղեկատվությամբ հատակագծերի և քարտեզների, օրթոֆոտոհատակագծերի,

օրթոֆոտոքարտեզների յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթի համար՝ 25000 դրամ.

5) վեկտորային ֆորմատով տեղագրական հատակագծերից և քարտեզներից առանձին հատվածներով տեղեկատվության տրամադրում՝

ա. 1:10 000 մասշտաբի դեպքում՝ 1 քառակուսի կիլոմետրի համար՝ 1000 դրամ,

բ. 1:25 000 մասշտաբի դեպքում՝ 1 քառակուսի կիլոմետրի համար՝ 250 դրամ,

գ. 1:50 000 մասշտաբի դեպքում՝ 1 քառակուսի կիլոմետրի համար՝ 62 դրամ.

6) թղթային կրիչով ամբողջական տեղեկատվությամբ հատակագծերի և քարտեզների, օրթոֆոտոհատակագծերի, օրթոֆոտոքարտեզների յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթի համար՝

ա. գունավոր տարբերակով՝ 6000 դրամ,

բ. սև-սպիտակ տարբերակով՝ 2000 դրամ.

7) գեոդեզիական ցանցի կետերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում՝ յուրաքանչյուր գեոդեզիական կետի կոորդինատի (աբսցիս, օրդինատ, բարձրություն) տրամադրման համար՝ 1000 դրամ.

8) անշարժ գույքի միավորի (հողամաս, շինություն) յուրաքանչյուր շրջադարձային կետի կամ անկյան կոորդինատի (աբսցիս, օրդինատ) տրամադրման համար՝ 100 դրամ.

9) թղթային տարբերակով ցանկացած մասշտաբի (15x15 սմ կամ 23x23 սմ) օդալուսանկարի տրամադրման համար՝ 1500 դրամ.

10) սույն մասի 1-ին և 5-րդ կետերով նախատեսված տեղեկատվության տրամադրումը թղթային տարբերակով կատարվում է սույն հոդվածի 1-ին և 5-րդ կետերով սահմանված վճարներին ավելացնելով հետևյալ վճարները՝

ա. A0 ֆորմատ՝ 5000 դրամ,

բ. A1 ֆորմատ՝ 2500 դրամ,

գ. A2 ֆորմատ՝ 1250 դրամ,

դ. A3 ֆորմատ՝ 625 դրամ,

ե. A4 ֆորմատ՝ 300 դրամ.

11) աշխարհագրական օբյեկտի անվանման վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար՝ 1000 դրամ.

12) Թեմատիկ քարտեզագրական նյութերի տրամադրման համար՝

ա. Հայաստանի Հանրապետության ազգային ատլաս՝ 20000 դրամ (յուրաքանչյուր հատորը),

բ. Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի էլեկտրոնային տարբերակի (Ջեյ ՓԻ Ի Ջի (JPEG)), (Փի Դի Էֆ (PDF)) 1 էջը՝ 3000 դրամ,

գ. թեմատիկ քարտեզների թղթային տարբերակ՝ 100x70 սմ (քաշը՝ 200գ, թուղթը՝ կավճապատ)՝ 3000 դրամ, A3 ֆորմատ (քաշը՝ 200գ, թուղթը՝ կավճապատ)՝ 1000 դրամ, A4 ֆորմատ (քաշը՝ 200գ, թուղթը՝ կավճապատ)՝ 500 դրամ,

դ. էլեկտրոնային թեմատիկ քարտեզ (Ջեյ ՓԻ Ի Ջի (JPEG)), (Փի Դի Էֆ (PDF))՝ 80000 դրամ.

13) Աշխարհագրական անվանումների տեղեկագրեր և տեղեկատու բառարանների տրամադրման համար՝

ա. մեկ տեղեկագրի համար՝ գունավոր տպագրություն՝ 3000 դրամ սև-սպիտակ տպագրություն՝ 1500 դրամ,

բ. մեկ տեղեկատու բառարանի համար՝ գունավոր տպագրություն՝ 3000 դրամ, սև-սպիտակ տպագրություն՝ 1500 դրամ.

14) Թեմատիկ քարտեզագրական նյութերի ինքնաշխատ եղանակով տրամադրում լիազոր մարմնի էլեկտրոնային հարթակի միջոցով (e-cadastre.am)

ա. Հայաստանի Հանրապետության ազգային ատլաս՝ 10000 դրամ (յուրաքանչյուր հատորը),

բ. Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի էլեկտրոնային տարբերակի (Ջեյ ՓԻ Ի Ջի (JPEG)), (Փի Դի Էֆ (PDF)) 1 էջը՝ 600 դրամ

գ. էլեկտրոնային թեմատիկ քարտեզ (Ջեյ ՓԻ Ի Ջի (JPEG)), (Փի Դի Էֆ (PDF))՝ 40000 դրամ:

15) Օրթոֆոտոհատակագծերի (Թի Այ Էֆ Էֆ (TIFF)), (Ջիո Թի Այ Էֆ Էֆ (GeoTIFF)) տրամադրում տեսանելի և ինֆրակարմիր տիրույթում (Ար Ջի Բի (RGB), (Էն Այ Ար/Սի Այ Ար) NIR/CIR))՝ անշարժ գույքի մեկ միավորի համար՝ 500 դրամ.

16) Պետական ռեֆերենց կայանների ծառայություններից մեկ սարքով օգտվելու համար՝

ա. 15 օր բաժանորդագրությամբ՝ 9000 դրամ,

բ. ամսական՝ 15000 դրամ,

գ. տարեկան բաժանորդագրությամբ՝ 162000 դրամ:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի միջոցով սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բազային տարածական տվյալների յուրաքանչյուր խմբի՝ (Օ Ջի Սի Վի Մի Էս (OGC WMS)) միջոցով առցանց հասանելիության ապահովման համար գանձվում է վճար հետևյալ չափերով.

1) տարեկան բաժանորդագրման համար՝ 400 000 դրամ,

2) ամսական բաժանորդագրման համար՝ 50 000 դրամ:

3. Սույն հոդվածով սահմանված տեղեկատվությունը տրամադրվում է դրա համար դիմումը ներկայացվելու օրվանից 3-րդ աշխատանքային օրը, բացառությամբ սույն հոդվածի ~~5~~4-րդ և ~~6~~5-րդ մասերով սահմանված դեպքերի: Սույն հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրվում է դիմումը ներկայացվելու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Դիմողի ցանկությամբ տեղեկատվությունը կարող է տրամադրվել նաև դիմումը ներկայացվելու օրվանից հետո՝ 2-րդ աշխատանքային օրը, որի դեպքում տեղեկատվության տրամադրման վճարը բազմապատկվում է երկու գործակցով:

5.Դիմողի ցանկությամբ տեղեկատվությունը կարող է տրամադրվել դիմումը ներկայացնելու օրը՝ աշխատանքային երկու ժամվա ընթացքում, որի դեպքում տեղեկատվության տրամադրման վճարը բազմապատկվում է վեց գործակցով:

6. Սույն հոդվածով սահմանված տեղեկատվությունը և դրան առնչվող ծառայությունները բարձրագույն ուսումնական հաստատություններին և

գիտահետազոտական կենտրոններին շահույթ չստանալու նպատակով ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին, վարչապետի աշխատակազմին, Ազգային ժողովի աշխատակազմին և պատգամավորներին, պետական կառավարման ~~համակարգի~~ մարմիններին, մարզպետարաններին, դատարաններին, դատախազությանը և քրեական հետապնդման այլ մարմիններին, կենտրոնական բանկին, ինքնավար մարմիններին և անկախ պետական մարմիններին, մարդու իրավունքների պաշտպանին, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին տրամադրվում է անվճար՝ Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացման համար: Պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց սույն մասով սահմանված կարգով տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև կադաստրային, տեղագրական կամ հողաշինարարական քարտեզները կարող են վերջիններիս կողմից փոխանցվել այլ անձանց միայն Կառավարության որոշման հիման վրա, որի դիմաց գանձվում է սույն օրենքով սահմանված վճարները:

7. Ֆիզիկական, իրավաբանականանձինք ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գույքի մասին հայցվող տեղեկատվությունը, մինչև 10 էջ պատճենահանված փաստաթղթերի մասով, ազատվում են տեղեկատվության տրամադրման վճարից:

Գ Լ ՈՒ Խ 6

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հոդված 20. Ազգային տարածական տվյալների ձևավորման հիմնական սկզբունքները.

1. Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալներն պետք է ձևավորվի և մշակվի հետևյալ սկզբունքների հիման վրա.

1) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ սուբյեկտների կողմից միասնական կոորդինատային համակարգի և բազային տարածական տվյալների պարտադիր օգտագործում.

2) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման և զարգացման գործընթացների փոխկապակցվածությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, անվտանգության, պետական կառավարման առաջնահերթ խնդիրների լուծման, երկրի պաշտպանունակության և ազգային անվտանգության ապահովման հետ.

3) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների արդիականություն, լրիվություն, լիարժեք նկարագրություն, հուսալիություն, ամբողջականություն և ճշգրտություն.

4) տարածական տվյալների համատեղելիություն, որը հիմնված է միասնական բազային տարածական տվյալների բանկի օգտագործման, միասնական կոորդինատային համակարգի, միասնական տեխնիկական ուղեցույցների և նորմերի հիման վրա.

5) տարածական տվյալների, մետատվյալների և ծառայությունների փոխգործելիություն.

6) տեխնիկական ուղեցույցների (կանոնակարգերի) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային ստանդարտների ներդաշնակեցում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին.

7) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի, որպես բարդ կազմակերպչական և տեխնիկական համակարգ, աստիճանական և շարունակական զարգացումը,

8) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բազային և թեմատիկ տարածական տվյալների հավաքածուների ստեղծման և թարմացման հաջորդականության պլանավորում.

9) պետության աջակցությունը Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բազային և թեմատիկ տարածական տվյալների հավաքածուների ստեղծմանը և թարմացմանը.

10) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարումը ազգային գեոպորտալի միջոցով:

Հոդված 21. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում Կառավարության լիազորությունները

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) ազգային ծրագրերի, հայեցակարգերի և ռազմավարությունների մշակումը, հաստատումն ու իրականացում,

2) պետական վերահսկողության և հսկողության կազմակերպում,

3) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի օգտագործման և վարման կարգի սահմանում:

Հոդված 22. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի համակարգող լիազոր մարմնի լիազորությունները

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքը համակարգում է լիազոր մարմինը, որը ունի հետևյալ լիազորությունները.

1) մշակում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բնագավառում նորմատիվ իրավական ակտերի նախագծեր.

2) մշակում և Կառավարությանն առաջարկում է հաստատել ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ներդրման գործունեության ծրագիրը.

3) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների տրամադրողների և օգտագործողների միջև առկա պրակտիկաների մասին տեղեկատվության փոխանակումը.

4) ապահովում է լիազոր մարմնի ղեկավարին կից Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հարցերով խորհրդակցական մարմնի գործունեությունը.

5) սահմանում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի վարման կարգը.

6) ապահովում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացումն ու արդիականացումը՝ ըստ ոլորտային իրավասությունների.

7) իրականացնում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ներդրման և օգտագործման ~~մոնիթորինգ~~մշտադիտարկում, տարեկան հաշվետվությունների պատրաստում և ներկայացում Կառավարությանը.

8) ապահովում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացմանն առնչվող աշխատանքների իրականացումը.

9) իրականացնում է բազային տարածական տվյալների և դրանց մետատվյալների, ինչպես նաև մետատվյալների ընդունում և վերահսկում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով.

10) ազգային գեոպորտալի միջոցով, ապահովում է բազային տարածական տվյալների հասանելիությունը՝ ոլորտային կադաստրների ինտեգրման նպատակով.

11) մշակում և ներդրում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի համար ծրագրային, տեխնոլոգիական ապահովումը.

12) ապահովում է օգտվողների մուտքը ազգային գեոպորտալ.

13) օգտվողներին տրամադրում է բազային տարածական տվյալներ և դրանց մետատվյալներ՝ համաձայն ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման կարգի.

14) հավաքագրում և վերլուծում է տարածական տվյալների և մետատվյալների օգտագործողներից ստացվող տեղեկատվությունը, բացահայտում է առկա խնդիրները և միջոցներ է ձեռնարկում դրանց լուծման ուղղությամբ:

Հոդված 23. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձիք ապահովում են թեմատիկ տարածական տվյալների հավաքածուների թարմացումը, ստանդարտացումը և ինտեգրումը սույն օրենքին համապատասխան:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձիք ունեն հետևյալ պարտականությունները.

1) մասնակցում են քաղաքականության մշակմանը և իրականացմանը իրենց իրավասությունների շրջանակներում և օրենքին համապատասխան.

2) համագործակցում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքին վերաբերող հարցերի շուրջ.

3) ապահովում են սուբյեկտների կամ երրորդ անձանց հասանելիությունը տարածական տվյալների հավաքածուներին և ծառայություններին.

4) Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմնին տրամադրում են բազային տարածական տվյալների քարտեզագրական շերտերը.

5) մասնակցում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի թեմատիկ տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցների մշակմանը.

6) նշանակում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով տվյալների մշակման, պահպանման, համակարգման և տրամադրման պատասխանատուներ.

7) ապահովում են ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով թեմատիկ տարածական տվյալների և մետատվյալների հասանելիությունը

8) ապահովում են իրենց ենթակայության տակ գտնվող տարածական տվյալների հասանելիություն ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով՝ համաձայնեցված ձևաչափով և որակով.

9) տեղադրում են տեղեկատվություն ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով տարածական տվյալների հասանելիության պայմանների մասին իրենց պաշտոնական կայք էջերում.

10) ռեսուրսներ են հատկացնում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի համապատասխան, իրենց գործունեության ոլորտին վերաբերող տարածական տվյալների արդյունավետ հավաքագրման, ստեղծման և վարման համար:

Հոդված 24. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման կարգը

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի վարման կարգը, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման և մշակման կարգը սահմանում է կառավարությունը:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների փոխանակման, հասանելիության և օգտագործման կարգը հաստատում է կառավարությունը՝ սահմանելով.

1) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների, մետատվյալների, տեխնիկական և ծրագրային ապահովման փոխգործելիությունը ապահովող պահանջներ.

2) կիրառման կանոնները, որոնք սահմանում են տարածական տվյալների հավաքածուների և ծառայությունների փոխգործելիության ապահովման տեխնիկական մեթոդները՝ հաշվի առնելով առկա տեխնոլոգիական հարթակների և էլեկտրոնային ծառայությունների կրկնակի օգտագործման առաջնահերթության կարգը, ինչպես նաև կատարման ժամկետները և ձևաչափերը:

Հոդված 25. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի տարածական տվյալների, մետատվյալների և ծառայությունների կառավարումը

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի միջոցով սպառողների (օգտագործողների) տարածական տվյալների հասանելիությունը տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով: Եթե տվյալների բանկում առկա են բազային տարածական տվյալների և այլ աղբյուրներից տարածական տվյալների միջև հակասություններ, ապա հուսալի է համարվում բազային տարածական տվյալների տեղեկատվությունը:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի մետատվյալները հրապարակվում են մետատվյալների շտեմարանում (կատալոգում), որոնց միջոցով շահառուները կարող են փնտրել և օգտվել տվյալների բազաներից կամ ծառայություններից:

3. Լիազոր մարմինը և այլ սուբյեկտները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումները մետատվյալների ամբողջականության և սահմանված որակին համապատասխանության ապահովման համար:

4. Լիազոր մարմինը ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բազային տարածական տվյալների հասանելիությունը առցանց քարտեզագրական ծառայության (Օ Ջի Սի ՎԻ ՖԻ ԷՍ, Վի Սի Էս, Վի Մի Էս(OGC WFS, WCS, WMS)) միջոցով սույն օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված մարմինների համար ապահովում է անվճար:

Հոդված 26. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային,պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գեոպորտալներ

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալների ցանցը ներառում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային

գեոպորտալը և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գեոպորտալները:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի լիազոր մարմինը ստեղծում և վարում է էլեկտրոնային ծառայություն՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալ, որն ապահովում է բազային և թեմատիկ տարածական տվյալների և մետատվյալների հասանելիությունը, առկայության դեպքում ներառում է նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գեոպորտալները:

3. Պետական կառավարման մարմինների գեոպորտալներում ներառվում են թեմատիկ, ոլորտային տարածական տվյալները և մետատվյալներ, որոնք ստեղծվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ոլորտային խնդիրների լուծման համար:

4. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գեոպորտալները ստեղծվում և վարվում են համապատասխանաբար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից.

5. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալը պետք է.

1) հասանելի լինի համացանցի և հաղորդակցության այլ միջոցների միջոցով.

2) հասանելի լինի ընդհանուր արտածման (ինտերֆեյսի) միջոցով.

3) ներառի մետատվյալներ տարածական բոլոր տվյալների համար, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաքագրվել են տարածական տվյալներ ստեղծող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից.

4) ներառի ներբեռնման հասանելիություն բոլոր բաց տարածական տվյալների համար, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաքագրվել են տվյալներ ստեղծող կազամակերպությունների կողմից:

6. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալը ապահովում է առնվազը հետևյալ գործառույթները.

1) որոնում, որն ապահովում է տեղեկատվական ցանցերում տարածական տվյալների և տարածական տվյալների ծառայությունների բացահայտումը.

2) տարածական տվյալների դիտարկում, տարածական օբյեկտների բնութագրերի և մետատվյալների բովանդակության մասին տեղեկատվություն.

3) մուտք, որն ապահովում է տարածական տվյալների մշակման կամ դրանց պատճենները ստանալու հնարավորություն.

4) կոորդինատային գործողությունները, որոնք ապահովում են տարածական տվյալների կոորդինատների փոխակերպումը մեկ կոորդինատային համակարգից (կամ քարտեզի պրոեկցիայից) մյուսը:

7. Ազգային գեոպորտալի համընդհանուր հասանելիությունը որոնման և դիտման հնարավորությամբ, ապահովվում է անվճար:

Հոդված 27. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի աշխատանքների կազմակերպում և համակարգում

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացման ուղղված աշխատանքների համակարգումն ապահովելու համար լիազոր մարմնին կից ձևավորվում է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի աշխատանքները համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Համակարգող խորհուրդ).

2. Համակարգող խորհուրդը համարվում է կոլեգիալ մարմին, որը չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

3. Համակարգող խորհուրդը խորհրդատվական դեր ունի տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի զարգացման քաղաքականության իրականացման գործում:

4. Համակարգող խորհուրդը բաղկացած է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հետազոտական և բարձրագույն ուսումնական

հաստատությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

5. Համակարգող խորհուրդի կազմը և գործունեության կարգը հաստատում է լիազոր մարմինը:

Հոդված 28. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ֆինանսավորման կարգը

1. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ֆինանսավորման կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման, ֆունկցիոնալության և զարգացման համար ֆինանսավորումը իրականացվում է պետական և համայնքային բյուջեների և օրենքով չարգելված այլ աղբյուրների հաշվին:

3. Պետության, համայնքի, օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից դրամաշնորհի կարգով տրամադրված միջոցների հաշվին ծրագրերը իրականացվում են լիազոր մարմնի համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 7

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 29. Տարածական տվյալների ոլորտում տեսչական վերահսկողությունը

1. Տարածական տվյալների ոլորտում տեսչական վերահսկողությունն իրականացնում է գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

~~ԳԼՈՒԽ 8~~

~~ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ~~

Հոդված 30. Տարածական տվյալների ոլորտում վեճերի լուծման կարգը

1. Տարածական տվյալների ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարիմների, ինչպես նաև պաշտոնատար անձանց միջև ծագած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

2. Մի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, մյուս կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց միջև վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 31. Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

1. Սույն օրենքը խախտելու համար վարչական պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով», իսկ քրեական պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

~~ԳԼՈՒԽ 9.~~
~~ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ~~

Հոդված 32. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-9-րդ մասերի, 10-րդ հոդվածի 7-

րդ մասի, 12-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերի, 13-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ մասերի, 14-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 2-րդ մասի, 16-րդ հոդվածի 10-րդ կետի, 18-րդ հոդվածի, 22-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի, 25-րդ հոդվածի 4-րդ մասի, 26-րդ հոդվածի 2-7-րդ մասերի, 28-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերը, 7-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի 1-9-րդ մասերը, 10-րդ հոդվածի 7-րդ մասը, 12-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերը, 13-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ մասերը, 14-րդ հոդվածը, 15-րդ հոդվածի 2-րդ մասը, 16-րդ հոդվածի 10-րդ կետը, 18-րդ հոդվածը, 22-րդ հոդվածը, 23-րդ հոդվածը, 25-րդ հոդվածի 4-րդ մասը, 26-րդ հոդվածի 2-7-րդ մասերը, 28-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերը ուժի մեջ են մտնում սույն օրենքի 5-րդ հովածի 1-ին մասի 3-8-րդ, 10-րդ կետերից, 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից, 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից, 24-րդ հոդվածից, 27-րդ հոդվածի 5-րդ մասից, 28-րդ հոդվածի 1-ին մասից բխող իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից, որոնք պետք է ընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երկու տարվա ընթացքում:

3. Պետական կառավարման մարմիններն ու պաշտոնատար անձիք, պետական կամ համայնքային հիմնարկներն ու կազմակերպությունները պետք է սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից 1 տարվա ընթացքում գույքագրեն պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալները և դրանք փոխանցեն պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական մարմնին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-376-20.09.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»					
1.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ հոդված**	3-րդ հոդվածի մասերի համարակալումը առաջարկում ենք ուղղել՝ «12), 13), 14)» թվերը համապատասխանաբար փոխելով՝ «11), 12), 13)» թվերի: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով նախատեսված օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանում հոդվածի մասերի**	Ընդունվել է:	Ընդունվել է

			համարակալումների ուղղում:		
2.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ հոդված**	«մարմինները,» բառից հետո լրացնել «պաշտոնատար անձինք,» բառերը **Քանի որ գեոդեզիական և քարտեզագրական գործունեության սուբյեկտներն են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները, հետևաբար լրացվում են նաև պաշտոնատար անձինք:**	Ընդունվել է:	Ընդունվել է
3.	**ՀՀ կառավարություն**	**5-րդ հոդված**	5-րդ հոդվածի 6-րդ մասում՝ «արդյունքներ» բառից հետո հանել «,այդ թվում՝ նորմատիվ իրավական կամ տեխնիկական փաստաթղթեր:» բառերը: **Քանի որ գեոդեզիական և քարտեզագրական գործունեության արդյունքների որպես տեսակ չի կարող հանդիսանալ նորմատիվ իրավական կամ տեխնիկական փաստաթղթերը:**	Ընդունվել է:	Ընդունվել է
4.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ գլխի վերնագիր,**	2-րդ գլխի վերնագրում «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	Ընդունվել է:	Ընդունվել է

		6-րդ հոդված	ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ» հետո ավելացնել «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ» բառերը: 2-րդ գլխի վերնագրից, 6-րդ հոդվածի վերնագրից և 1-ին կետից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջների համապատասխանեցում:**		
5.	**ՀՀ կառավարություն**	**6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներ**	6-րդ հոդվածում ավելացնել նոր 5-րդ, 7-րդ հոդվածում նոր 10-րդ , 8-րդ հոդվածում նոր 6-րդ, և 9-րդ հոդվածում նոր 5-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ՝ «իրականացնում է սույն օրենքով նախատեսված այլ լիազորություն-ներ:» **Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում Կառավարության, լիազոր մարմնի, պետական**	Ընդունվել է	Ընդունվել է

			կառավարման այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունների նախատեսում «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի նախագծով:		
6.	**ՀՀ կառավարություն**	**10-րդ հոդվածի 3-րդ կետ**	Ներկայացնել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ «3.Նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պարտադիր է գեոդեզիական եւ քարտեզագրա-կան աշխատանքներ իրականաց-նող բոլոր սուբյեկտների համար:»: **Փոփոխությունը կատարվել է, քանի որ այդ լիազորությունը վերապահվել է Կառավարությանը (Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):**	Ընդունվել է	Ընդունվել է
7.	**ՀՀ կառավարություն**	**16-րդ հոդված**	1. 5-րդ և 6-րդ կետերից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը, 2. 7-րդ կետը ներկայացնել	Ընդունվել է	Ընդունվել է

			հետևյալ խմբագրությամբ՝ «7. Ռեֆերենց կայանների ցանցի միջոցով ծառայությունների մատուցումը արգելվում է, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:»: **Քանի որ «Տարածական տվյալների մասին» օրենքի նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված է պետական ռեֆերենց կայանների ծառայություններից մեկ սարքով օգտվելու համար համապատասխան վճար:**		
8.	**ՀՀ կառավարություն**	**21-րդ հոդված**	Հոդվածը ներկայացնել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 21. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			մասի 8-րդ կետի (11-րդ հոդվածի 1-ին մաս), 16-րդ հոդվածի 4-րդ մասի (մաս 5), որոնք ուժի մեջ են մտնում համապատասխանաբար 11-րդ հոդվածի 1-ին մասից և 16-րդ հոդվածի 5-րդ մասից բխող իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից: 2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերից, ինչպես նաև 11-րդ հոդվածի 1-ին մասի և 16-րդ հոդվածի 5-րդ մասից բխող իրավական ակտերը ենթակա են ընդունման սույն օրենքն ընդունվելուց հետո 6 ամսյա ժամկետում: 3. Սույն օերնքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Գեոդեզիայի, քարտեզագրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի մասին» 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-179 օրենքը:»: **Օրենքի նախագծից բխող իրավական ակտերի ընդունման ժամկետների սահմանում:**		
«ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ»					

1.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	1-ին մասում՝ «տվյալների» բառերից հետո հանել «ստեղծման, հավաքագրման, պահպանման, օգտագործման, տրամադրման, տարածման, փոխանակման» բառերը, փոխարենը լրացնել «մշակման» բառը: **Քանի որ օրենքի նախագիծը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տարածական տվյալների մշակման և կառավարման հետ կապված հարաբերությունները:**	Ընդունվել է:	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	1-ին մասում՝ «պայմանագիր» բառից հետո հանել «եւ համաձայնագրերից, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը» բառերը: **Միջազգային պայմանագրերը պարունակում են նաև համաձայնագրեր:**	Ընդունվել է	Ընդունվել է
3.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ հոդված**	1. 3-րդ հոդվածով լրացվող 1-ին մասի 2-րդ կետում՝ «(բազային և թեմատիկ)» բառերից հետո հանել «համախումբ» բառը, 2. 1-ին մասի 4-րդ կետում՝ «մշակում՝» բառից հետո հանել	Ընդունվել է	Ընդունվել է

			(«ստեղծում») բառը, **Քանի որ «(բազային և թեմատիկ)» հասկացությունը իր մեջ պարունակում է տարածական տվյալների համախումբ:** **Քանի որ մշակման արդյունքում ստեղծվում է տարածական տվյալները:**		
4.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ գլխի վերնագիր**	Վերնագիրը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «**Գ Լ ՈՒ Խ 2** **ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՒԼՈՐՏՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**» **Նախագծի 2-րդ գլուխը համապատասխանեցվել է նշված գլխում առկա հոդվածների բովանդակությանը:**	Ընդունվել է	Ընդունվել է
5.	**ՀՀ կառավարություն**	**5-րդ հոդվածի 1-ին մաս 6-րդ կետ**	1. «իրավաբանական անձանց,» բառերից հետո լրացնել «քաղաքացիություն չունեցող	Ընդունվել է	Ընդունվել է

		5-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացված նոր 2-րդ մաս	անձանց,» բառերը 2. Լրացնել նոր 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված Կառավարության լիազորությունները սպառիչ չեն և սույն օրենքով կարող են սահմանվել այլ լիազորություններ:» **Տարածական տվյալների ոլորտում Կառավարության լիազորությունների հստակեցում:**		
6.	**ՀՀ կառավարություն**	**6-րդ հոդված**	1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
7.	**ՀՀ կառավարություն**	**9-րդ հոդված**	1. 9-րդ մասում՝ «նախագծային նպատակով» բառերի փոխարեն լրացնել «շինարարական աշխատանքների նախագծման նպատակով» բառերը, 2. 11-րդ մասում՝ «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «ֆիզիկական և» բառերը: **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջների**	Ընդունվել է	Ընդունվել է

			պահպանում: **Հստակեցվել են «նախագծային նպատակով» բառերը, որոնք վերաբերում են տարածքի տարածական շինարարական աշխատանքների պլանավորման նախագծին:**		
8.	**ՀՀ կառավարություն**	**10-րդ հոդված**	1. 6-րդ մասով լրացվող 4-րդ կետը ներկայացնել հետևյալ բովանդակությամբ՝ «4) իրավունք (գույքային իրավունքի տեսակ).» 2. 8-րդ մասում՝ «բարելավվում է:» բառերից հետո ավելացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ, «Բազային տարածական տվյալների մեջ ներառված տեղեկատվության կազմը սահմանվում են տարածական տվյալների ստանդարտներով և ստանդարտացման ուղղեցույցներով:» **Իրավունք (գույքային իրավունքի տեսակ) լրացումը կատարվել է**	Ընդունվել է	Ընդունվել է

			ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու համար:		
9.	**ՀՀ կառավարություն**	**5-րդ գլխի վերնագիր**	Վերնագիրը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ **«Գ Լ ՈՒ Խ 5** **ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՍՏԵՂԾՈՒՄ, ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ՏԱՐԱԾՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»** **Նախագծի 5-րդ գլուխը համապատասխանեցվել է նշված գլխում ներառված հոդվածների բովանդակությանը:**	Ընդունվել է	Ընդունվել է
10	**ՀՀ կառավարություն**	**17-րդ հոդված**	1-ին մասում «պետական» բառից հետո լրացնել «և տեղական ինքնակառավարման» բառերը **Քանի որ տարածական տվյալների մետատվյալների հավաքագրումը, ստեղծումը, տրամադրումը և տարածումը իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:**	Ընդունվել է	Ընդունվել է

11	**ՀՀ կառավարություն**	**18-րդ հոդված**	1-ին մասում «պետական» բառից հետո լրացնել «և տեղական ինքնակառավարման» բառերը **Քանի որ տարածական տվյալների մետատվյալների տրամադրումը, տարածումը, փոխանակումը իրականացվելու է ցանցային (առցանց) ծառայությունների միջոցով:**	Ընդունվել է	Ընդունվել է
12	**ՀՀ կառավարություն**	**19-րդ հոդված**	6-րդ մասում՝ 1-ին նախադասությունից հանել «հաշվեքննիչ պալատին,» իսկ 2-րդ նախադասությունից՝ «կառավարման» բառերը: **Քանի որ Հաշվեքննիչ պալատն անկախ պետական մարմին է:**	Ընդունվել է	Ընդունվել է
13	**ՀՀ կառավարություն**	**22-րդ հոդված**	1. Վերնագրից հանել «և պարտավորությունները» բառերը 2. 5-րդ մասում «որոշում է» բառերի փոխարեն լրացնել «սահմանում է» բառերը: **Հոդվածի վերնագրից հանվել է «պարտավորություններ» բառը, քանի որ հոդվածով չի նախատեսվում ազգային**	Ընդունվել է	Ընդունվել է

			տարածական տվյալների ենթակառուցվածքի համակարգող լիազոր մարմնի պարտավորություններ:		
14	**ՀՀ կառավարություն**	**25-րդ հոդված**	1. 1-ին մասում՝ «Եթե» բառից առաջ գրված «2.» թիվը հանել, 2. 4-րդ մասում «օրենքի 19-րդ» բառերից հետո հանել «հոդվածի 6-րդ մասով» բառերը: **Համարակալման վրիպակի ուղղում:**	Ընդունվել է	Ընդունվել է
15	**ՀՀ կառավարություն**	**30-րդ հոդված**	1-ին և 2-րդ մասերից «պետական» բառից հետո հանել «կառավարման» բառը **Քանի որ պետական կառավարման մարմինների շրջանակը սահմանված է օրենքով:**	Ընդունվել է	Ընդունվել է
16	**ՀՀ կառավարություն**	**31-րդ հոդված**	«կարգավորվում են» բառերից հետո լրացնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով,» բառերը: **Օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանում:**	Ընդունվել է	Ընդունվել է

17	**ՀՀ կառավարություն**	**9-րդ գլուխ**	9-րդ գլուխը ներկայացնել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. **«ԳԼՈՒԽ 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ** **Հոդված 32. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-9-րդ մասերի, 10-րդ հոդվածի 7-րդ մասի, 12-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերի, 13-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ մասերի, 14-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 2-րդ մասի, 16-րդ հոդվածի 10-րդ կետի, 18-րդ հոդվածի, 22-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի, 25-րդ հոդվածի 4-րդ մասի, 26-րդ հոդվածի 2-7-րդ մասերի, 28-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի: 2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-	Ընդունվել է	Ընդունվել է

			րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերը, 7-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի 1-9-րդ մասերը, 10-րդ հոդվածի 7-րդ մասը, 12-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերը, 13-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ մասերը, 14-րդ հոդվածը, 15-րդ հոդվածի 2-րդ մասը, 16-րդ հոդվածի 10-րդ կետը, 18-րդ հոդվածը, 22-րդ հոդվածը, 23-րդ հոդվածը, 25-րդ հոդվածի 4-րդ մասը, 26-րդ հոդվածի 2-7-րդ մասերը, 28-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերը ուժի մեջ են մտնում սույն օրենքի 5-րդ հովածի 1-ին մասի 3-8-րդ, 10-րդ կետերից, 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից, 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից, 24-րդ հոդվածից, 27-րդ հոդվածի 5-րդ մասից, 28-րդ հոդվածի 1-ին մասից բխող իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից, որոնք պետք է ընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երկու տարվա ընթացքում: 3. Պետական կառավարման մարմիններն ու պաշտոնատար անձիք, պետական կամ		

			համայնքային հիմնարկներն ու կազմակերպությունները պետք է սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից 1 տարվա ընթացքում գույքագրեն պետական գաղտնիք պարունակող տարածական տվյալները և դրանք փոխանցեն պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական մարմնին:»: **Իրավական որոշակիության ապահովման նպատակով հստակեցվել են օրենքից բխող և ընդունման ենթակա իրավական ակտերի ժամկետները:**		
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի վերնագիր**	«ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ԼՐԱՑՆԵԼ «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» **Քանի որ նախագծով կատարվում են լրացումներ և փոփոխություններ:**	Ընդունվել է	Ընդունվել է

2.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	1-ին հոդվածով լրացվող օրենսգրքի 95.6-րդ հոդվածով լրացվող 3-րդ մասում՝ «հավաքագրման աշխա-տանքների» բառերից հետո լրացնել «,ներառյալ օդալուսանկարահանման» բառերը: **Համապատասխանեցվել է հոդվածի բովանդակությանը:**	Ընդունվել է	Ընդունվել է
«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	**ՀՀ կառավարություն**	Վերնագիր	Վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառի փոխարեն լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԸ **Քանի նախագծով կատարվում է փոփոխություն:**	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջների պահպանում:**	Ընդունվել է	Ընդունվել է